

Կիպրահայ

ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆՂԵՍԸ

Յատուկ իմաստ եւ խորհուրդ ունին ամավերջի շրջանաւարտներու հանդէսները, որոնք գեղեցիկ բերքահաւաքի պահ են՝ տարիներու ուսումնական-կրթական տքնաջան աշխատանքի եւ մեկնակէտը նոր հանգրուաններու...: Անոնք տեղի կ'ունենան մեր հայագաղութներու դպրոցներէն ներս՝ հայրենաշունչ, քաղցրաթախիծ մթնոլորտի մը մէջ... նշանաւորելով ուրախութիւնը յաջող աւարտի մը եւ միաժամանակ թախիծը հրաժեշտի ու



բաժանման...: Անոնք կը դառնան նաեւ համայն համայնքի Տօնական ուրախութեան պահ, քանզի շրջանաւարտ պարման-պարմանուհիները նոր յոյսն ու յոյսն են մեր համայնքներու հաւաքական ապագային, մեր վաղուան երաշխիքը...:

Նման յուզումնախառն, թախճանոյշ մթնոլորտ մը կը տիրէր Նիկոսիոյ Նարեկ վարժարանի մուտքին եւ ամփիթատրոնին մէջ՝ Չորեքշաբթի 18 Յունիս, 2014-ին, կ. ե. ժամը 6:00-էն սկսեալ, երբ

շրջանաւարտներն ու ծնողները, ուսուցիչ-ուսուցչուհիները, պատասխանատուներ եւ հիւրեր տակաւ կը ժամանէին դպրոց, գոհունակութեան ժպիտը՝ իրենց աչքերուն մէջ, այլեւ յուզումով կենսատրոփ...:

Ամավերջի Հանդէսը, նախագահութեամբ՝ Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի, սկսաւ ժամը ճիշդ 6:30-ին՝ շրջանաւարտներու ամփիթատրոն մուտքովը, առաջնորդութեամբ Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի: Հանդիսավար Օրդ.



Նորա Նաճարեան՝ հայերէնով եւ յունարէնով, յաջողութեամբ վարեց յայտագրի գործադրութեան հեզասահ ընթացքը:

Կիպրոսի Հանրապետութեան, Հայաստանի Հանրապետութեան եւ Նարեկ Վարժարանի քայլերգներու կատարումով սկիզբ առաւ յայտագրի գործադրութիւնը: Տարեկան տեղեկագիրը կարդաց տնօրէնուհին,

ընդգծելով Նարեկ վարժարանի հայապահպանման առաքելութիւնը եւ այդ ուղղութեամբ



տարուած աշխատանքները՝ դասարանային թէ արտադասարանային: Շեշտեց նաեւ միջոյրոցական շփումները՝ Նարեկ վարժարանի եւ յունական կարգ մը դպրոցներու միջեւ, անդրադարձաւ Ծնողաց Միութեան դպրոցանուէր աշխատանքին, պաշտօնական հիւր-մտաւորականներու, գործիչներու եւ կրթական մշակներու կատարած այցելութեան, դպրոցէն ներս կատարուած կրթական եւ արհեստագիտական բարենորոգչական աշխատանքներուն, տալով համառօտ պատկերը տարեկան ընդհանուր գործունէութեան:

Այնուհետեւ, Նախակրթարանի Շրջանաւարտները խմբային արտասանութիւնը կատարեցին՝ Լեւոն Վարդանի «Հայերէնին» բանաստեղծութեան, հայեցի շունչով եւ խանդավառութեամբ: Հայկական երկու պարեր՝ «Դրմբօ» եւ «Արցախ» կատարուեցան՝ հայկական պարի հարազատ երաժշտութեան ներքոյ, իւրաքանչիւր պարին յատուկ զգեստաւորումով, շարժումներով, արտայայտչականութեամբ, ռիթմով, ստեղծելով հայ բնաշխարհի գունազեղ մթնոլորտ մը, ներկաները պահ մը փոխադրելով կարծէք Մասսեաց վեհապանձ հովանիին տակ՝ հայրենական բոյրին ու թոյրին հետ հաղորդակից... : Այս առիթով, գնահատելի է Վարժարանի Պարախումբի Պարուսոյց՝ Պրն. Պետրոս Ղարիպեանի անխոնջ ջանքերը եւ քրտնաջան աշխատանքը, որոնք տուին իրենց բաղձալի արդիւնքը:

Միջնակարգի աշակերտներու՝ «Կարմիր Հողը» արտասանութենէն ետք, կատարուեցաւ վկայականներու եւ մրցանակներու բաշխումը ձեռամբ Պետական Ներկայացուցիչ Տիար



Վարդգէս Մահտեսսեանի, Հոգաբարձութեան Ատենապետ Տիար Վարդան Թաշճեանի եւ Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի: (Աւելի վար՝ շրջանաւարտներու անունները):

Հրաժեշտի արտառուչ ուղերձներով հանդէս եկան՝ Շուշան Չիլինկիրեան,

Նախակրթարանի շրջանաւարտներուն անունով եւ՝ Հրաչեայ Զաքարեան, Միջնակարգի շրջանաւարտներուն անունով, ուր հրաժեշտի իրենց յուզիչ խօսքերուն միացան իրենց հայկականութեան զգացումներն ու գիտակցութիւնը, զանոնք մշտապէս վառ ու կենսունակ պահելու խոստումը...:

Իր Հուսկ Բանքին մէջ, Տնօրէնուհին՝ խօսքը ուղղելով շրջանաւարտներուն, յատկապէս ըսաւ. «Որպէս հաւատարիմ ժառանգորդները մեր փառաւոր մշակոյթին, բարձր պահեցէք հայ ազգին վարկը, ուր որ ալ գտնուիք ձեր յետագայ կեանքի ճանապարհին: Արժանապատուութեամբ կրեցէք ձեր ազգային ինքնութիւնը, որ ձեզ կը բնորոշէ որպէս ՀԱՅ անհատ՝ աշխարհի բազմազգ եւ բազմամշակոյթ ընկերութեան մէջ: Արժանի եղէք այդ անուան ձեր ամբողջ էութեամբ, սրտով, հոգիով ու գիտակցութեամբ: Միշտ յիշեցէք որ ձեր հայու ինքնութիւնը ձեր գերագոյն արժէքն է, առանց որուն դուք կը զրկուիք ձեր սեփական հոգիէն, որքան ալ բարձր դիրքեր գրաւէք կեանքի մէջ: Որքան խորիմաստ կը հնչէ Մեծ Մատենանին մէջ արձանագրուած երկաթագիր պատգամը. «Ի՞նչ կ'արժէ մարդ արարածը,



Էթէ նոյնիսկ աշխարհը շահի, բայց հոգին կորսնցնէ»: Ապրեցէք այդ հոգիով, Հայու Հոգիով, ո՛ր որ ալ երթաք...»:

Հանդէսի աւարտին, նախքան Տէր Մաշտոց աւագ քահանայի Պահպանիչը, Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Պրն. Սարգիս Տէմիրճեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Երէցկին Թամար Հապէշեանի, յաջողութեամբ կատարեց «Արփա Սեւան» եւ «Հրաժեշտի Երգ» խմբերգները, արժանանալով բոլորին ջերմ ընդունելութեան:

ԱԶԱՏ ԽՕՍՔ-ը ջերմօրէն կը շնորհաւորէ բոլոր շրջանաւարտները, իրենց մտղթելով նորանոր յաջողութիւններ եւ կանաչ ճանապարհ: Ստորեւ՝ Նախակրթարանի եւ Միջնակարգի շրջանաւարտները անուն առ անուն.-

Նիկոսիոյ Նախակրթարանէն՝ Այնէճեան Միքէլա, Գույումճեան Թայլին, Հեքիմեան Աննա, Մանսուր Սոֆի, Միերեան Յասմիկ, Զիլինկիրեան Շուշան, Պաղտասարեան Ռուզաննա, Տէր-Պետրոսեան Նաթալի, Գազանճեան Տիգրան, Մահտեսեան Յակոբ, Սարգիսեան Արէն, Փոշոլեան Կորին եւ Քիրեմիտճեան Նէյթըն:

Լառնագայի Նախակրթարանէն՝ Շէօմելեան Յակոբ, Տէօվլէթեան Նարինէ եւ Թերզեան Հայկ:

Լիմասոլի Նախակրթարանէն՝ Եօրղալլա Վերօնիքա, Խաչատրեան Աննա եւ Յովհաննիսեան Ռուբէն:

Միջնակարգ Վարժարանէն՝ Զաքարեան Հրաչեայ եւ Սեմերճեան Մարօ:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

Խմբագրական

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ԱՊԱԳԱՅԻ ԳՐԱԲԱԿԱՆ

Կրթական տարեվերջի այս օրերուն, երբ հայրենի ու աշխարհասփիւռ դպրոցներէն շրջանաւարտ՝ հայ պարման-պարմանուհիներու նոր հունձք մը կ'ընծայուի կեանքին, հայ կեանքին ի մասնաւորի, մեր մտածման սեւեռակէտը կ'ուղղենք դարձեալ կրթութեան գերագոյն խնդրին, քանզի կրթութիւնն է վստահաբար գերագոյն ազդակը ժողովուրդի մը, ազգային հաւաքականութեան մը յառաջդիմութեան ու զարգացման: Անոնց յարատեւումին պատմութեան մէջ, անոնց վերածնունդին:



Փոխուող ժամանակներուն ու պայմաններուն լոյսին տակ, կրթութեան յղացքն ու համակարգը կը վերամեկնաբանուին ու կը վերարժեւորուին շարունակաբար, դառնալով կիզակէտը հաւաքական բուռն քննարկումներու եւ բանավեճերու, մասնայատուկ խորհրդածողովներու կամ սեմինարներու, քանզի անկարելի է մտածել ապագային մասին, առանց կրթութեան:



Հելլենական քաղաքակրթութեան վաղ ժամանակաշրջանին, իմացութիւնը կը սահմանուէր որպէս առաքինութիւն: Լուսաւորութեան Դարաշրջանէն սկսեալ եւ արդի ժամանակներուն հետ համընթաց, իմացութիւնը տակաւ սկսաւ առնչուիլ գիտական ներուժի զարգացման հետ գերազանցօրէն, եւ դարձաւ հիմնական ազդակը տնտեսական բարգաւաճման, ինչպէս նաեւ՝ բանական ու կազմակերպուած, օգտապաշտ ու ժողովրդավար ընկերութեան մը կառուցումին: Մարդկային միտքն ու մարդուն իմացութիւնը լաւագոյնս օգտագործելն ու արդիւնաւորելը դարձած են քսանմէկերորդ դարու մարտահրաւերը: Կարծէք սկսած է իրականութիւն դառնալ մեծ քաղաքագետ Ուինսթըն Չըրչիլի կանխատեսումը, թէ՛ ապագայի կայսրութիւնները մտքի կայսրութիւններն են: Այս կը թուի ըլլալ այժմեական, արդի յղացքը կրթութեան. մարդկային մտապաշարի կամ գիտելիքի ձեռքբերումը եւ անոնց առաւելագոյն օգտագործումը յանուն սպառողական քաղաքակրթութեան մը պահանջներուն:

Հարց կը ծագի անմիջապէս, թէ կրթութեան նման ըմբռնումը արդեօ՞ք պիտի կարենայ ստեղծել իսկապէս արժէքաւոր ընկերութիւն մը, որ հիմնուած ըլլայ ոչ միայն հացի ապրելու կարիքի բաւարարումին, այլեւ ու մանաւանդ՝ հոգեւոր-բարոյական-մշակութային արժէքներով ապրելու էական պահանջքին վրայ: Թէ արդեօ՞ք՝ կրթութեան նման օգտապաշտ եւ նիւթապաշտ ըմբռնումը, պիտի չհնարաւորէ՞ ի վերջոյ, որ մարդկային շահամոլութիւնն ու եսամոլ կիրքերը, գործելով անարգել, շրջէն բանականութիւնը իր հակաբեւեռին՝ անհեթեթ ու անգուշակելի իրականութեանց գիրկը: Վերջին տասնամեակներու փորձը՝ պատերազմներ ու տնտեսական տագնապներ, ահաբեկչութիւն ու ոճիր, զանգուածային բնաջնջման զէնքերու սպառնալիք...., իրենց ամբողջ ահաւորութեամբ, կը յուշեն յստակօրէն, որ կրթութիւնը շատ աւելին ըլլալու է, քան գիտելիքներու ստեղծումն ու կուտակումը, աւելին՝ քան գիտական մտքի աճը, աւելին՝ քան գիտահնարքներու սրընթաց, հրաշքի համագօր ստեղծումն ու տարածումը....:

Որքան ճիշդ կը հնչէ 18-րդ դարու ֆրանսացի մտածողին խօսքը՝ «Գիտութիւնը առանց խիղճի՝ հոգիի կործանում է սոսկ»: Արդարեւ, կրթութեան եւ իմացութեան հիմքերու հիմքը ինքնաճանաչումն է, Սոկրատէսեան «ՄԱՆԻՐ ՁՔԵԶ»ը: Սա կ'ենթադրէ որոշապէս, որ մարդ էակը թէ ազգային հաւաքականութիւնը տեւաբար գիտակից պիտի ըլլայ, թէ ո՞վ է ինք, ո՞ր կը կու գայ եւ ո՞ր կ'երթայ: Մտքի իր տեսադաշտէն հեռացնելու չէ երբեք այն գերագոյն, վախճանական նպատակները, որոնք իմաստ, արժէք ու նպատակ կու տան մարդկային կեանքին. Մարդը մարդացնող բարոյական-հոգեւոր այն վսեմ սկզբունքներն ու իտեալները, որոնք պիտի ուղղորդեն իր կեանքը, տեսլական պիտի հաղորդեն անոր, գոյիմաստ ու գոյապատճառ հանդիսանան:

Գիտութեան յառաջդիմութեան հետ համընթաց, հոգեւոր-բարոյական-մշակութային արժէքներու կենսունակութիւնը էական նշանակութիւն ունի մարդ-անհատին եւ հաւաքականութեան համար, եթէ չուզեր ան դառնալ մարդ-մեքենայ, սպառողական քաղաքակրթութեան հսկայ մեքենային մէկ պտուտակը լոկ, զուրկ՝ անհատականութենէ, ինքնուրոյն դիմագիծէ, կեանքը առաջնորդող իտեալներէ....



Մեր փոքր ածուին համար առաւել եւս, կարելոր է, անտարակոյս, որ մեր տեղն ու դերը նուաճենք՝ տակաւ ձեւաւորուող «իմացական հասարակութեան» մէջ, գիտելիք ստեղծող, արագ ու ճիշդ կազմակերպուող ընկերութեան մէջ, մեր գիտական-արհեստագիտական իրագործումներով եւ ձեռքբերումներով, մեր ճարտարարուեստի եւ այլ բնագաւառներու նուաճումներով...: Այս բոլորով հանդերձ, սակայն, հարց տալու չէ՞նք, թէ ինչի՞ կը վերածուինք մենք՝ որպէս ինքնուրոյն ազգ ու երկիր, եթէ չպահպանենք եւ չվերակերտենք, չվերանորոգենք եւ չկենսատրենք մեր ինքնուրոյն դիմագիծը ներկայացնող հոգեւոր-մշակութային արժէքները՝ հայոց Մեծաքանչ լեզուն, գիրն ու գրականութիւնը, երգ-երաժշտութիւնը,

ճարտարապետութիւնն ու նկարչութիւնը, աւանդութիւններն ու ապրելակերպը....., որոնք մեր ինքնութիւնն են, սեփական աշխարհընկալումը, հոգեբանութիւնն ու ճաշակը, ազգային նկարագիրն ու դիմագիծը ցուցնող ոճը, առանց որոնց մենք կը դադրինք ՀԱՅ ըլլալէ, որքան ալ յառաջդիմենք ու հզօրանանք՝ տնտեսապէս, գիտականօրէն եւ նոյնիսկ ժողովրդագրական տուեալներով...:

Կրթութիւնը անպայմանօրէն պիտի ըլլայ ՀԱՅԵՏԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ, ազգային ինքնաճանաչում կերտող, ազգային գիտակցութիւն դարբնող, հոգեւոր-մշակութային արժէքներ փոխանցող, անոնց նկատմամբ խորունկ պատասխանատուութիւն թրծող, եթէ պիտի յարատեւենք որպէս հայոց ազգ ու հայոց երկիր...:

Տարիներ առաջ, հայ դպրոցին տուած իր այցելութեան առիթով, բանաստեղծ Գեորգ Էմին այնքան յատկանշականօրէն կը գրէր դպրոցին ոսկեայ Յուշամատենին մէջ. «Հայոց լեզուն, գիրն ու գրականութիւնը, հայոց պատմութիւնը.... սոսկ դպրոցական առարկաներ չեն, այլ՝ մեր գոյութեան եւ գոյատեւման հիմքը... անոնցմէ է կախեալ մեր լինել-չլինելու խնդիրը, մեր գոյութիւնն ու մեր ապագան»: Պիտի լսե՞նք այս իմաստալից պատգամը հայ բանաստեղծին, թէ՞՝ օտարամոլութենէ տարուած, պիտի կրկնենք շատ մը հայ ծնողներու տխուր խրատը իրենց զաւակներուն. « հայերէնը կարելոր չէ. Միւս դասերդ սորվէ, որպէսզի յաջողիս...»:

Հայերէնը, անով ջամբուած հայեցի կրթութիւնը կրնան շահութաբեր չըլլալ՝ ներկայ նիւթապաշտ եւ օգտապաշտ աշխարհին մէջ: Բայց անոնք մեր հարազատ ինքնութիւնն են, հայ հոգին ու ոգին: Պիտի հրաժարի՞նք մեր ինքնութենէն: Ի՞նչ պիտի արժէր, արդարեւ, նոյնիսկ ամբողջ աշխարհը շահիլ, բայց հոգին կորսնցնել...: Սա չէ՞ խորիմաստ, հին բայց երբեք չհիւնցող պատգամը՝ Մեծագոյն Մատենին մէջ արձանագրուած:

Կրթութիւնը կ'ըլլայ ճշմարտօրէն ազգի ապագայի գրաւական, եթէ անիկա ներդաշնակօրէն կարենայ համադրել իր մէջ՝ գիտական մտքի զարգացումը, իմաստութիւնը, մարդկային եւ ազգային ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ եւ ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ փոխանցող հոգեւոր-մշակութային արժէքներու ընկալումն ու ճաշակը: Անոնց կենսունակ պահպանման նկատմամբ խոր յանձնառութիւնը: Նոյնիմաստ պատգամ մը չեն փոխանցե՞ր արդեօք՝ 5-րդ Ոսկեդարու ոսկի խօսքերը մեր Թարգմանչաց Հայրերու. «Ճանաչել գիմաստութիւն եւ զիւրատ, Իմանալ զբանս հանճարոյ»: Պատգամ՝ որ դարձաւ, նշանակալից կերպով, առաջին հայերէնի թարգմանուած նախադասութիւնը

Հին բայց չհինցող, իրենց այժմեականութիւնը պահած տողեր, որոնց մէջ է թաքնուած որոշապէս՝ ազգի ու հայրենիքի վերածնունդի շունչը.....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

«Կը հրապարակուեն նոր, աւելի ահաւոր փաստեր»

ՄԻՐԱՆՈՅԾ ՊԱՊԵԱՆ, Հարցազրուցավար

Երեքշաբթի, 10 Հունիսի 2014

Մեր զրուցակիցն է ազգագրագետ Հրանուշ Խառատեանը



Հարցում.- Տիկին Խառատեան, Ձեր կարծիքով պատահական էր, որ Միկոյեանի արձանը Երեւանում տեղադրելու նախաձեռնութիւնը համընկաւ Եւրասիական տնտեսական միութեան ինտեկրացիոն գործընթացներին, Աստանայի հանդիպմանը, Նախիջեւանի սահմանի կրակոցներին: Որքանով են այս ամէնը փոխկապակցուած միմեանց հետ, հաշուի առնելով, որ կայ տեսակէտ, որ այս ամէնը թելադրուած է Մոսկուայից:

Պատասխան.- Ես էլ շատ յաճախ եմ մտածում այդ հարցի շուրջ, բայց գրեթէ վստահ եմ, որ կապ չկայ: Միկոյեանի թոռներն ասում են, որ 2008-ից ի վեր նրանք փորձում են Միկոյեանի արձանի տեղադրման խնդիրն առաջ մղել: Կարծում եմ՝ սա նրա թոռների կողմից իրենց նախահօր սոցիալական ռեապիլիտացիայի կամ սոցիալական կերպարի ձեւաւորման փորձ է, որը վաղուց է սկսուել. ֆիլմեր են նկարում, յօդուածներ են տպագրում և այլն: Ես այս շղթայի մէջ եմ տեսնում իրականութիւնը:

Հարցում.- Ինչպիսի՞ն պէտք է լինէր մեր, մասնաւորապէս քաղաքապետարանի արձագանգը այդ նախաձեռնութեանը:

Պատասխան.- Ես տպաւորութիւն ունեմ, որ մեր երկրում այս հարցերը ընդհանրապէս կանոնակարգուած չեն: Կարծում եմ՝ մի բարձրաստիճան պաշտոնէայ, հնարաւոր է նաև



երկրի նախագահը, խօսք է տուել, նոյնիսկ առանց մտածելու և խնդրի խորքը տեսնելու, ու հիմա բոլորը լծուել են այդ խօսքը կատարելուն: Ես տեսայ, թէ ինչ թղթեր են ներկայացուել Երեւանի աւագանուն, այդ մարդիկ ամբողջ օրը նման թղթեր են քուէարկում առանց առարկութեան: Այս դէպքում էլ ոչ մի առարկութիւն չի եղել, նոյնիսկ Հայկ Դեմոյեանն այդ քուէարկութեանը չի եղել: Այսինքն՝ ոչ մի բան, որը ուշադրութիւն կը հրաւիրէր խնդրի վրայ, չի եղել: Միւս կողմից էլ յայտնի է, որ ոչ ոք չի առաջնորդուում սկզբունքներով, նոյնիսկ յայտնի չեն այդ սկզբունքները կամ չափանիշները: Այսինքն՝ ամէն ինչ տեղի է ունեցել մեր երկրում ստեղծուած արատաւոր աւանդոյթով՝ մէկը մի բան է ասել, միւսները փորձում են այդ ասածը պաշտպանել:

Հարցում.- Յայտարարուեց, որ Ռուսաստանում յայտնի հայեր կողմ են արտայայտուել, որ Միկոյեանի արձանը տեղադրուի Երեւանում, այդ թուում նշուեց Արմէն Ջիգարխանեանի անունը: Ըստ Ձեզ, ինչո՞ւ են նրանք շահագրգռուած այդ հարցում:

Պատասխան.- Ես չեմ տեսել որեւէ թուղթ, որտեղ նշուած կը լինի, որ Ջիգարխանեանը կամ մէկ ուրիշը կողմ է արտայայտուել արձանի տեղադրմանը: Ասում են, որ կայ, բայց ես այն չեմ կարդացել: Երկրորդ՝ չեմ բացառում, որ Միկոյեանների ընտանիքն է նման բաներ շրջանառութեան մէջ դնում: Յայտնի է, որ Պրահայում նրանք ստորագրահաւաքներ են կազմակերպում այդ հարցով և այլն: Այսինքն՝ չեմ բացառում, որ մոսկուահայերն էլ են այդ շղթայի մի մասը, Միկոյեանների ընտանիքի սուպերակտիվութեան դրսեւորում է սա: Եւ վերջապէս, երրորդը՝ քանի դեռ ասպարեզում չկային Միկոյեանին առնչուող կոնկրետ փաստաթղթեր, քանի դեռ չկար որոշակի ձեւաւորուած կարծիք, ես չեմ բացառում, որ մարդկանց մեծ մասը դատում էր շատ ընդհանուր տեղեկութիւններով: Յատկապէս, որ հայ ժողովրդի մէջ, և մասնաւորապէս Հայաստանում, ընդհանրապէս չի քննարկուել բռնաճնշումների ընթացքն առհասարակ, և Միկոյեանի մասնակցութիւնը դրանց մասնաւորապէս: Առաւել ես չի քննարկուել, որեւէ դասագրքում չկայ վաղ շրջանում Միկոյեանի մօտեցումները տարբեր խնդիրներին: Կարծում եմ, որ հասարակութեան մեծ մասը մեղք էլ չունի, որ տեղեակ չի դրանից:

Հարցում.- Բայց Արխիւի տնօրէնն է դրա մասին բարձրաձայնում, նաև Հայկ Դեմոյեանը, տարբեր գործիչներ:

Պատասխան.- Այդ բոլորը հիմա են բարձրաձայնում, երբ արդէն Երեւանի աւագանիում քուէարկութիւնը տեղի է ունեցել: Իսկ երբ այդ թղթերը պատրաստուում էին, երբ մոսկուահայերը թուղթ էին ստորագրում, երբ այս խնդիրն առաջ էին տանում, այդ ժամանակ Միկոյեանի գործունէութիւնը բացայայտող փաստերը հրապարակի վրայ չկային: Դրանք յայտնուեցին Երեւանի աւագանու որոշումից յետոյ: Այժմ այդ որոշումը պէտք է նաև հաստատուի, ու երբ շատ փաստերի մասին արդէն բարձրաձայնուած է, ես չգիտեմ, արդեօք հնարաւո՞ր է, որ որոշում կայացնելիս այս ամէնը հաշուի չառնուի:



Հարցում.- Եթէ, այնուամենայնիւ, արձանը տեղադրուի, արդեօք այն կեանք կ'ունենայ՞, հաշուի առնելով, որ արդէն հիմա խօսում են արդարացուած վանտալիզմի մասին:

Պատասխան.- Վանտալիզմը ինչ-որ արժեքի պղծումն է: Այս պահին ներհասարակական տրամադրութիւններում Միկոյեանի արձանի շուրջ կատարուող քննարկումներն ակնյայտօրէն ցոյց են տալիս, որ մեր հասարակութիւնն այն ընկալում է որպէս բացասական արժեք: Այս պայմաններում եթէ իսկապէս դնեն արձանը և իսկապէս հասարակական զայրոյթի հողի վրայ արձանի նկատմամբ կատարուեն որոշ գործողութիւններ, չեմ կարծում, որ դա վանտալիզմ է: Հակառակը՝ դա լինելու է հասարակական վրդովմունքի արտայայտման այն հնարաւորութիւնը, որը չի դրսեւորուում որոշում կայացնելիս: Հասարակութեանը հնարաւորութիւն չեն տալիս իր կարծիքն արտայայտել և այդ կարծիքով փորձել ազդել որոշումների վրայ:

Հարցում.- Ձեր կարծիքով, ո՞ւմ արձանները պէտք է դնեն Երեւանի փողոցներում, որո՞նք են չափանիշները:

Պատասխան.- Անկեղծ ասած, չէի ցանկանայ իմ մասնաւոր կարծիքը փաթաթել ինչ-որ մէկի վրայ: Ես կարծում եմ, որ սա շատ լաւ լակմուսի թուղթ էր՝ ցոյց տալու, որ մենք ընդհանրապէս պէտք է այս հարցերի վերաբերեալ սկզբունքային որոշում կայացնենք, ինչ-որ չափանիշներ սահմանենք, ինչ-որ յարաբերակցութիւններ լինեն: Օրինակ, քաղաքական գործիչների արձաններ պէտք է լինեն, հասարակական գործիչների՞, կամ արդեօք գործիչների արձաններ պէտք է լինեն ընդհանրապէս, թէ սիմվոլների ու գաղափարների: Կամ դրանք ի՞նչ համամասնութեամբ պէտք է լինեն: Ով և որտեղ է ասել, որ մեր պատմութեան մէջ գլխաւոր դերակատարներն, այսպէս կոչուած, քաղաքական գործիչներն են, կամ մեր հասարակութեան կեանքում նրանց ներդրումն աւելի մեծ է, քան կոմպոզիտորների, նկարիչների, գրողների կամ գիւղացու: Սրանք հարցեր են, որոնք պէտք է քննարկուեն, և ես չեմ կարծում, որ դա մէկ անգամ ընդունուող որոշում պէտք է լինի: Այն պէտք է քննարկուի, միշտ փոփոխութիւններ արուեն, բայց ինչ-որ յստակ չափանիշներ և որոշումներ լինեն, որոնցով մարդիկ կողմնորոշուեն: Նոյնիսկ կարող է հարցը դրուել այսպէս՝ հանրապետութեան տարածքում արժեքների համամասն բաշխումը արձանի՞ տեսքով է, սիմվոլիկ երեւոյթների՞, դպրոցում կրթութեան միջոցով տրուելի՞ք է, ի՞նչ համամասնութեամբ, և այլն: Այսինքն ես հիմա չէի ուզենայ իմ կարծիքն ասել, թէեւ ունեմ իմ կարծիքը և այդ կարծիքի մէջ ամենալուսաւոր դերը չի վերապահուած առհասարակ քաղաքական գործիչներին, լաւ կամ վատ: Այս հարցում վճռորոշ պէտք է լինի հանրային քննարկման միջոցով յանձնաժողովային խմբի կողմից ձեւաւորուող սկզբունքը, որը հաւանութիւն կը ստանայ, բայց որը ևս քարացած չպէտք է լինի:

Հարցում.- Իսկ ինչո՞ւ այս թեման այսքան արդիական ու քննարկուող դարձաւ:



Պատասխան.- Բուն քննարկման առիթների մեջ մեկն էլ, այսպէս կոչուած, ռուսաստանեան ակտիվութիւնն է Հայաստանի ճակատագրի վրայ ազդելու առումով: Հնարաւոր է, որ այդ ազդեցութիւնն իր դերն ունի: Երկրորդն այն է, որ օրինակ ես, դէպքերի բերումով, վերջին 4 տարիներին աշխատում էի ԽՍՀՄ քաղաքական բռնութիւնների հասարակական ընկալումների թեմայի վրայ և հիմա բաւական հարուստ նիւթ ունենք և փաստաթղթերի, և վերլուծութիւնների, և եղած գրականութեան: Սա մի երեւոյթ է, որը, ցաւօք, ԽՍՀՄ շատ հանրապետութիւններում շատ աւելի լաւ է վերլուծուած, իսկ Հայաստանում դրա վերաբերեալ ոչինչ չկայ: Չկայ նաեւ հասարակական կարծիք, որովհետեւ նիւթ էլ չկայ մտածելու, մասնագիտօրէն էլ մատուցուած չէ, փաստօրէն դասագրքից այն կողմ որեւէ բան չկայ, և սա նոյնպէս բաց տարածք է: Հիմա մեր այն նոթերը, որոնց մի մասը որոշել էինք չհրատարակել, եկան համընկան հենց այս քննարկումներին: Այսինքն ձեռքի տակ կար ահռելի նիւթ, որը ցոյց է տալիս որոշ երեւոյթներ, որոնք ուղղակիօրէն ընդունուող որոշմանը հակասում են: Օրինակ, այդ նամակը պատրաստող Գայիանէ Շագոյեանը և միւսները, այդ թուում ես, հսկայական նիւթ ունենք, այդ թուում մասնաւորապէս Միկոյեանի արած-չարածի վերաբերեալ: Անգամ այդ փաստերի շատ քիչ մասն է, որ շրջանառութեան մեջ ենք դրել: Մենք չենք ուզում հասարակութեանն անընդհատ ռմբահարել այդ նիւթերով, ուղղակի ինձ էլ թուում էր, որ եթէ առաջին մի քանի փաստաթղթերը հրապարակուեն, մի փոքր աւելի զապուածութիւն կը լինի արձանը տեղադրելու որոշում կայացնողների կողմից: Բայց պարզուում է, որ դա դեռեւս նրանց կարծիքի վրայ չի ազդում, և անհրաժեշտ կը լինի աւելի շատ նիւթեր հրապարակ հանել:

Հարցում.- Այսինքն՝ Միկոյեանին աւելի դաժան կը տեսնենք, քան մի քանի հազար հայերի գնդակահարութեանը նրա մասնակցութիւնն է:

Պատասխան.- Խնդիրը միայն դա չէ: Այո, փաստաթղթեր կան, որոնց մի մասն ինքն է ստորագրել, միւսներին մասնակցութիւն է ունեցել և, միւս կողմից, կայ նրա ընտանիքը, որը Միկոյեանին ներկայացնում է որպէս ամբողջ աշխարհը փրկող կերպար: Ներկայում մեր մամուլում նրա մասնակցութիւնը ստալինիզացիայի շրջանում փորձում են ներկայացնել, թէ իբր ինքն առաջինն կերպարն էր, որ Խրուշչովին համոզեց ձեռքը սկսել, ինքը սկսեց բանտերից ազատել մարդկանց: Գիտէ՞ք, թէ այս ամենի մեջ ինչքան շատ սուտ կայ: Դա շատ ցաւալի է, ու ես չեմ ուզում առայժմ խօսել այդ մասին, բայց հրապարակ են հանում երեւոյթներ, որոնք մեղմ ասած, իրականութեանը հակասում են: Մարդկանց շատ քիչ բան է յայտնի ստալինիզացիայի շրջանում նրա գործունէութեան մասին, սակայն ուզենք թէ չուզենք նա մասնակից է եղել այդ ամենին: Աւելի վաղ՝ լենինեան շրջանում ևս նրա գործունէութիւնը քիչ յայտնի է: Դրանք նիւթեր են, որոնք ուրիշների կողմից հրապարակուած են:

Աղբիւր՝ Lragir.am (Դասական ուղղագրութեան վերածուած)

Գրական-Մշակութային

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԼԱՔ ՊԱՀՐ Սեյրանուհի ԳԵՂԱՄԵԱՆ

Այո, Ալիսիա Կիրակոսեան բանաստեղծուհին ապրում էր, կար հեռաւոր Արգենտինայում:



Նա արդէն ճանաչուած էր ոչ միայն Արգենտինայում, այլեւ նրա սահմաններից հեռու: Նրա մասին բազմաթիւ նշանաւոր քննադատներ ու բանաստեղծներ ասել էին գնահատանքի խօսքեր: Իսկ աշխարհահռչակ ժագ Պրելերը գրել էր. «Գիսաւոր աստղ, արեւ, բանաստեղծութեան լաւ պահ»: Իտալիայում լոյս տեսած նրա բանաստեղծութիւնների «Էուրօն եւ կէտադրութիւն» ժողովածուն սեփական ցանկութեամբ նկարագարողել էր Փիքասոն... Այո,

նա բանաստեղծ էր, սակայն Հայաստան այցելելուց յետոյ դարձաւ հայ բանաստեղծ: Անշուշտ, կարելի է ընդհանրապէս բանաստեղծ լինել, առանց խիստ շեշտուած ազգային պատկանելութեան, սակայն առանց այդ շեշտուածութեան, առանց արմատի եւ էութեան ինչ-որ մեծ ու կարեւոր բան պակաս կը լինի բանաստեղծի ամբողջութեան մէջ, որովհետեւ ոչինչ չի կարող փոխարինել այն մեծ զգացումին, որ կարող է առաջացնել արեանդ հետ կապ ունեցող նախնիներիդ հողը, եւ ոչ մի ուրիշ հող, բացի հայրենիից, չի կարող զգայարաններդ ընդունակ դարձնել ընկալել ու աշխարհի բոլոր գոյները, բոլոր բոյրերը, բոլոր գաղտնիքները: Անժխտելի է, որ մի մեծ ու կարեւոր բան պակաս կը լինէր նաեւ Ալիսիա Կիրակոսեանի պոեզիայում, եթէ պատահած չլինէր այդ հաղորդակցումը մարդու եւ հողի միջեւ, նրա պոեզիայում հաստատ շատ բան պակաս կը լինէր, եթէ նա գրած չլինէր «Նամակ առ Հայաստան» բանաստեղծութիւնը, որ խտացումն է նրա ե՛ւ սիրոյ, ե՛ւ կարօտների, ե՛ւ փիլիսոփայութեան, ե՛ւ մնացած բոլոր մեծ ու կարեւոր զգացումների.

Երկի՛ր Հայաստան,

Երբ ես ուզում եմ քո անունը տալ,

Իմ մէջ զարթնում է մի թաքուն աղօթք՝

Ամենահինը,

Երբ քեզ եմ երգում,

Իմ մէջ շարժում է

Սկսում բջիջն իմ ամենանոր...



Հայրենի հողը դարձաւ այն կենտրոնաձիգ ուժը, որն ի մի հաւաքեց բանաստեղծուհու ստեղծագործական բոլոր թրթիռները.

Քանզի այն ամէնն,

Ինչ որ պատմում է

Մայր հողի մասին,

Ամպի ու լեռան,

Հացի ու փառքի,

Արեւի լոյսի,

Երաժշտութեան,

Բանաստեղծութեան,

Արցունքի մասին,

Անդունդի մասին,

Սարսուռի մասին

Ու քարի մասին,

Ինձ քո մասին է պատմում շարունակ:

Դա հայրենի հողին, ժողովրդին եւ աշխարհին ուղղուած անզուսպ մի ճիշ էր, նաեւ ընդվզում, նաեւ տառապանք ու բողոք այս աշխարհի անդաշնութեան դէմ, եւ այսքանից յետոյ հայրենիքի սիրոյ մասին ամբողջութեամբ արտայայտուելու անկարողութեան ցաւ.

Բայց մի թէ այդքան հեշտ է բացատրել

Ամբողջութիւնը,

Մի թէ հաւատը մեկնաբանել է,

Թէ ինչ է Աստուած...

Եւ ինչպէ՞ս պատմել սարսուռի մասին,

Հաւատքի մասին,

Եւ էութիւնը ինչպէ՞ս մերկացնել

Ցոյց տարու համար

Կերպարը սիրոյ:



Հայրենիքի թեման, որ զգայական մեծ լիցք է պարունակում, եղել է մնում է բոլոր մեծ բանաստեղծների պոեզիայի գլխաւոր թեմաներից մէկը, եւ, այնուամենայնիւ, Ալիսիա Կիրակոսեանի ստեղծագործութեամբ այն գեղարուեստական նոր կերպաւորում ու մեկնաբանում ստացաւ.

Դու կնիք ես,

Դրուած

Արտասուքի վրայ,

Միրոյ վրայ...

Եւ քեզ վերապրելու

Թրթռումի ուժից

Գոյանում է ուժը վերապրումի:

Սակայն որքան էլ մեկնաբանուեն իսկական բանաստեղծի ստեղծագործութիւնները, որքան էլ փորձ արուի բացել տողերի, բառերի միջեւ խտացուած զգացումներն ու փիլիսոփայութիւնը, միեւնոյն է, ամենամբողջականն ու ճշմարիտը դարձեալ մնում են այդ ստեղծագործութիւնները, որովհետեւ բանաստեղծութիւնը հենց այն է, ինչը չես կարող պատմել, բացատրել, ինչը սովորական միջոցներով, սովորական ձեւի մէջ անսովորն ու զարմանալին է, որովհետեւ ներշնչումի պահը, որ բանաստեղծին մղում է գրել, անկրկնելի է: Եւ եթէ Ալիսիա Կիրակոսեանը գրում է, որ Հայաստանը սիրում է «մի հեռու, ուրիշ համակարգութեան բոլոր գոյներով», ապա աւելորդ է փորձել անուն գտնելու այդ գոյների համար: Ընդհանրապէս, Ալիսիա Կիրակոսեանի պոեզիային, լինի դա սիրային, հայրենասիրական, թէ մայրական թեմաներով, յատուկ է տիեզերական կշռոյթով բանաձեւելու յատկութիւնը, որ մտքի ու բանաստեղծական հարստութեան նոր որակ, նոր գեղեցկութիւններ է բացում ընթերցողների առջեւ:

Բանաստեղծութիւններից մէկում, որ կոչուում է «Պուենոս-Այրես հսկայ քաղաքում», բանաստեղծուիին խորհում է, կշռում, թէ իրենից յետոյ ինչ կարող է ինքը թողնել մարդկանց ու աշխարհին.

Օ՛, եթէ կեանքում կարողանայի

Կտակել ընտիր,

Շատ ընտիր մի բան,

Որն ուժ ունենար

Ինձ անմահացնել,

Բան, որ չի գնուում



Ոչ մի շուկայում

Բան, որ կարենար

Ինձ արդարացնել...

Չգիտեմ, որ թուականին է գրել Ալիսիա Կիրակոսեանն այս բանաստեղծութիւնը, բայց այսօր հաստատօրէն կարելի է ասել, որ այն ամէնը, ինչ նա կարողացել է անել իր բանաստեղծական արուեստի միջոցով, հենց այն ընտրագոյնն է, որը չի գնում ոչ մի շուկայում, որն իսկապէս ունի ուժը ե՛ւ արդարացնելու, ե՛ւ անմահացնելու բանաստեղծուհուն...

«Հայրենիքի ձայն», 10 ապրիլի 1985թ.

ՀԵՆՑ ԱՅՍՊԷՄ ՊԱՐՉ ՈՒ ՇԻՏԱԿ



Մերթ բացում՝ մ-տարածում ու մերթ փակում,

մերթ՝ բարձրանում-թեւածում ու մերթ էլ իջնում,

կծկում է մերթ ցաւագին ու մեկուսանում,

մերթ քանդում՝ մ ու բոլորի՛ն սիրով միանում,...

մերթ ծա՛ ոս է լինում ու բա՛ց ըմբոստանում,

դարսում ալիքն ալիքին, ահե՛ր փոթորկում,

մերթ զուլալում է ու մերթ՝ խաղաղում...

մերթ դառն խոժոռում, մերթ՝ նագով ժպտում,



մերթ՝ զուսպ- խոհուն ու մերթ էլ՝ անզուսպ,
մերթ՝ քար լռութիւն, մերթ՝ խօսքի տարափ,
մերթ՝ պատգամ-յորդոր, մերթ՝ սաստող հայեացք...
մերթ՝ ցաւ-դառնութիւն, մերթ՝ խինդ. ու բերկրանք՝
մերթ՝ խորոց ապրում ամօթի ու ափսոսանքի,
մերթ՝ հպարտութեան, ու մեծ հիացմունքի,
մերթ՝ արժանի հեզնանք ու մերթ՝ հաւանութիւն,
մերթ՝ պայծառ առաւօտ, մերթ՝ զիշեր մթին..
մերթ՝ տիրուհի հպարտ, մերթ՝ ծառայ գլխիկոր,.
մերթ՝ այս ու մերթ այն, բայց հենց այսպէ՛ս:
Թող որ անյանգ, անեղանակ,թող որ անոխիթմ,
բայց միշտ՝ անթեք, անբեկ ու պարզ ու շիտակ
Ե՛ս եմ, ու հոգի՛ն է իմ, իմ տրամադրութիւնը,
իմ շիտա՛կ արձագանգը իմ շուրջ ալիքուող,
չորսդին տարուբերուող դէպք ու դէմքերին....

ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՃԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

28 Մայիս

Յօդուածներ

Ընդառաջ Տեղասպանութեան 100-Ամեակին Պահեր Ու Խոհեր

Արամ Սեփերճեան, Պէյրուս, 22 Ապրիլ 2014 -Ա-

«Ապրիլ» ամիս է կրկին, ու Մահուան տարելի՛ց...: - ՈՉ, կը պատասխանեն ես ինձի, այլ... «ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՅ... »

Ներաշխարհիս դուռն է որ կը թակեն: Ամէն տարի Ապրիլ ամիսին, ներքին ուխտագնացութիւն մը կը կատարեմ դէպի Անհունը: Ծանօթ եւ անծանօթ ներքին ուժեր կ'աղմկեն ներաշխարհիս մէջ: Մերթ կը վերյայտնուին իբրեւ պատկեր ու խոհեր... մերթ՝ դասական երաժշտութիւն, հատուածներ հոգեհանգստեան համանուագներէ կամ պատարագներէ...: Վիշտս կը քաղցրանայ կարծէք հոգիէս ներս, ու ես վերստին կ'ապրիմ այն



պահս, երբ, իբրեւ ուխտաւոր կը գտնուէի ճիշդ այն Հողին վրայ, որ 1915-1918 եղեր էր անշիրիմ գերեզմանատունը մեր մէկ միլիոն ու կէս նահատակներուն:

Հալէպէն մինչեւ Տէր-Զօր ինքնաշարժով երեք ժամուան ճանապարհ էր: Տեղ-տեղ «ահեղավագ Եփրատն» էր, որ կը գծագրուէր բնութեան մէջ: Եփրա՛տը... որ կը կալանաւորէր մտածումներս ու կը վերարտադրէր հազար անգամ հազար անպատանք դիակներուն անձէս յորդահոս ջուր կենդանի, ծնած լեռնաշխարհէն հայկական որ չհասաւ սակայն ըլլալու

ջուր ըմպելի եւ յագեցնելու քաղցն ու ծարաւը հազար անգամ հազար նօթի ու ծարաւ տարագիրներու:

Ու ես Եփրատի կամուրջէն կ'ուղղուիմ դէպի Նահատակաց Յուշարձան-Մատուռը:

Տէր-Զօր, Կիրակի եւ Ապրիլ 24: Այսինքն՝ կիրակնօրեայ ծէս ու պատարագ:

Անձնատուր ներաշխարհային ալեկոծումներուս, կը մօտենամ յուշաքարերուն... ակնածանքով:

Խաչքար եւ անմար բոցը կրակին:

Զգրուած բանաստեղծութիւն:

Մատներս կը խրեմ սեւ հողին մէջ, ափ մը հող առնելու համար հետս եւ յանձնելու արուեստագէտ բարեկամիս, որ կ'ուզէր վերստեղծել Վարուժանին «Կարմիր Հողը»



քերթուածին վերընթերցումին պարզեւած գեղարուեստական պահերը: Ու հողը կը սրբանայ մատներու մէջ: Կ'ըլլայ սի'րտը բաբախուն՝ Կոմիտասին ու Վարուժանին: Կ'ըլլայ երգ ու քերթուած՝ մտածումներու մէջ, հորովել ու շարական՝ շրթներու վրայ, արցունք ու հառաչ հոգիիս խորը: Սա հո'ղը... որ քիչ առաջ թերեւս պարզ հող մըն էր տակաւին, մինչ հիմա արդէն կ'այրէ մատներս ու կ'ըլլայ կրակէ յիշողութիւն...: Գիտեմ, յուշ-յիշատակներն են որ շունչ եւ հոգի կու տան այս հողին:

Հոգեհանգի'ստ կը կատարուի այստեղ, Յուշարձան-Մատուռին ստորգետնեայ խորհրդատունը: Կ'իջնեմ վար սանդուխներու պարոյրէն, ուրկէ վայրահակ նայուածքս Յուշասիւնը կը պարուրէ:

Ոսկերոտիքն է նահատակներուն: Սրբացած ու նշխար դարձած ոսկերոտիք: Կոմիտասեան «Տէր Ողորմեա՛ն» կ'երգուէր բազկատարած եւ՝

«Տուր աշխարհիս խաղաղութիւն» կ'աղերսէր:

Օ՛տն ու պատարագը՝ թող որ շարունակուէր վերը, խորանէն, իսկ ես՝ ըլլայի անձնատուր մեծագոյն խորհուրդին՝ լուրթեան ձայնանիշերը վերձանող: Ըլլայի այդ պահուն խորհրդակիր պատարագիչ մը՝ անսքեմ ու անվեղար, վառէի յոյսի եւ յոյսի կանթեղ-մում մը, երկուք-երեք... «վասն ձեր եւ բազմաց», բոլորին, «որք անկան յընթացս մեծ եղեոնի»: Թողէք զիս մինակ, նահատակաց սրբազան յուշասիւնին հետ, որպէսզի ես անոր մէջ ողջունեմ կենդանացած ու վերակենդանացած խորհուրդը մեր լինելիութեան եւ այս յուշաքարին մօտ, թողէք որ ըլլամ հայրենի բանաստեղծին խորհրդակից ու... «չոքեմ ծունկի, քարանամ այստեղ առանց արցունքի...» եւ շարունակեմ անաւարտ գրոյցս սրբացած ու քարացած նշխարներու հետ:

Որպէսզի, յետոյ, վերադառնամ կրկին իմ աշխարհս եւ նահատակներու թիւին հաւասար քար ու նշխար վերածուին լուսեղէն սիւնի, ստանան մարմի'ն ու երգեն փառքը ՀՐԱՇԱԼԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ:

-Բ-

«Կոչեմ ապրողաց», - կ'արձագանգենք բանաստեղծին հրաւերին:

Տասնամեակները այսքա՛ն արագօրէն սահեցան ու մեզ հասցուցին Յեղասպանութեան 100-ամեակի շէմին: Ներաշխարհիս դուռը կը թակեն բազմախորհուրդ մտածումներ: Ազգովին, կանգնած ենք, բոլորս՝ սերունդներ տարագիր, Յեղասպանութեան 100-ամեակի շէմին, ու պիտի արտասանենք մեր դատապարտագիրը:

Այո, պիտի խոստովանինք, թէ՛

1915 Ապրիլ 24-ով խորհրդանշուած ճակատամարտը, մենք ՀԱՅԵՐՍ կորսնցուցինք: Սակայն՝ պատերազմը մեր լինելիութեան կը շարունակուի տակաւին:

Մեծագո'յնը եւ ծանրակշի'ռը մեր կորուստին՝



ՀՈՂԻն էր հայրենի,- 90 առ հարիւր տոկոսը մեր պատմական հայրենիքին:

Այնտեղ, իր բնօրրանին մէջ ապրող մեր երկու միլիոն նահատակներուն հետ՝ կորո՛ւստն է նաեւ մեր դարաւոր մշակութային ժառանգութեան:

1915-ը թուական մըն է միայն Յեղասպանութիւնը խորհրդանշող: Պատմականօրէն ան սկիզբ առաւ 19-րդ դարու առաջին կէսին, երբ աւելի քան մէկ ու կէս միլիոն հայեր բռնի թրքացուեցան, ի հակադրութիւն հայաբա՛ր գոյատեւող շուրջ 3 միլիոն մեր ազգաբնակչութեան: Անոր հետեւանքով է որ ծնունդ առին ազատագրական մեր շարժումները եւ ո՛չ թէ հայուն ապրելու եւ վերապրելու բաղձանքը խորհրդանշելու կոչուած մեր անդրանկաշունչ դրուագները պատճառ հանդիսացան, արդէն իսկ նախաձրագրեալ օսմանեան եղեռնագործութեանց:

Արդարեւ, 100-ամեակի սեմին, մեր ուշադրութիւնը կը սեւեռենք հետեւեալ հիմնական կէտերուն.

ա) Հայկական Դատին վերլուծումն ու քննութիւնը դուրս բերել ներազգային իր նեղ պարունակէն ու յանձնել զայն մասնագէտ հայ թէ օտար իրաւաբաններէ կազմուած միջազգային չափանիշով յատուկ յանձնաժողովի մը: Երբ փոքր տարողութեամբ դատեր կ'ունենան իրենց թղթածրարներն ու փաստաբանները, ինչո՞ւ չհետապնդենք մեր Դատը բարձրագոյն մակարդակով:


բ) Առ այդ, հարկ է կազմութիւնը Հայկական (հայրենի եւ արտերկրի) Իրաւաբանական Կաճառի մը, որ վայելէ նաեւ ճանաչումը միջազգային աստեաններուն, եւ այս Կաճառը պաշտօնապէս հետապնդէ մեր ազգային դատը:

գ) Արեւմտահայ տարագիր սերունդներու արդար իրաւունքներու պաշտպան ՄԻԱՅԵԱԼ ԽՈՐՀՈՒՐԴԻ մը կազմութիւնը աւելի՛ քան երբեք, անհրաժեշտ է այսօր, կոչուած ներկայացնելու եւ հետապնդելու մեր պատմական կորուստները: Այսինքն՝ եկած է ժամանակը ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ:

դ) Մինչեւ ե՞րբ պիտի յաջորդեն իրարու ամուլ տասնամեակներ՝ առանց տեսնելու իրականացումը մեր Մեծ Երագին: Մեր ժողովուրդին պատմական հողերուն մէկ տասանորդին վրայ հաստատուած ինքնիշխան եւ անկախ հայրենի պետականութիւնը կորիզն է միայն ապագայ մեր յոյսերուն իրականացումին: Փարիլ հայրենի հողին պաշտպանութեան եւ անոր ամբողջականութեան՝ պարտքն է իւրաքանչիւր Հայուն: Խորտակել՝ պատն ու պատնէշը միջազգային լռութեան եւ անտարբերութեան՝ պարտականութիւնն է իւրաքանչիւր յանձնառու հայ մտաւորականին, պատմագէտի՛ն թէ հրապարակագիրին: Ծանօթացնել հայկական դատին իրաւութիւնն ու իրաւական արժէքը միջազգային աստեաններուն՝ անյետաձգելի պարտաւորութիւնն է քաղաքական եւ դիւանագիտական նրբանցքներուն մէջ երթելեկող ինքնակոչ թէ ազգընտիր գործիչներուն, որոնց անտեղիտալի հետապնդումներով պիտի կատարուին հայանպաստ արձանագրութիւններ:



Հայ ժողովուրդի բաղկացուցիչ բոլոր տարրերը ունին արդար իրաւունք եւ պարտք բերելու իրենց մասնակցութիւնը այս մեծ զոհաբերումին, ընծայաբերումին: Միասնական ու միասնական կեցուածքը՝ հեռու ամէն հատուածական մօտեցումէ, Մէկ յայտարարի ներքեւ հարկ է որ հաւաքէ ներկայացուցչական հանգամանքները հայ ժողովուրդին: Այս առաջին փորձին նախաձեռնութիւնը պիտի գայ հայրենի պետութեան կողմէ: Ան է որ Ազգային Ժողովին առնչութեւ սփիւռքահայ ներկայացուցչական մարմին մը պէտք է ստեղծէ իր յատուկ ծրագրատրուումով եւ առաքելութեամբ: Երբ Հայկական հարցն է մեր մեծագոյն օրակարգը, երբ մեր հողային պահանջատիրութիւնն է որ իր լուծումին կը սպասէ, երբ միջազգային խորհրդածողովները աւմիշտ ժխտական մօտեցում եւ լուծում կը պարտադրեն հայ ժողովուրդին, ժամանակն է որ Ապրիլ 24-ով խորհրդանշուած բռնցքատրուումը, միացումը չմնան իբրեւ անկենդան բառեր, այլ՝ իսկական պատկերը այն վեհաժողովին որ պիտի համախմբէ մեր աշխարհական թէ կրօնական բոլոր հատուածները: Հայրենիքին զուգահեռ մեզի պարտադրեալ այս իրավիճակը չի նշանակեր եւ պէտք չէ նշանակէ հակադրուիլ հայրենի իրականութեան եւ անոր պետական վարչամեքենային: Հայ ժողովուրդին դարաւոր



Մերոց Նանասանոս եկեղեցու արտաքին կառուցը

պահանջքին ու դատին իրաւատէրը հայրենի պետականութիւնն է, որուն պատմական հողերէն բռնօրէն տեղահանուած արեւմտահայութեան ժառանգորդն է սփիւռքահայութիւնը, որ թէ՛ իրողապէս եւ թէ՛ իրաւականօրէն կը ներկայանայ իբրեւ յետնորդ սերունդը 1915-ի նահատակութեան:

Անհրաժեշտ է վերամիաւորումը մեր ազգային բաղադրատարրերուն,- առանց գերակայութեան թէ ստորակայութեան զգայնութիւններու եւ բարդոյթներու,- հարկ է որ համախմբէ սփիւռքահայութիւնը, որուն ներկայացուցչական խորհուրդն է որ իր լիիրաւ մասնակցութիւնը պիտի բերէ Ազգային Գերագոյն Ժողովին, հայրենի պետութեան հովանիին ներքեւ:

Այս մէկը կրնանք իրականացնել գիտական եւ առարկայական չափանիշներու կիրարկումով: Երկխօսութիւնը բազմակարծիք մեր հաւաքական կեանքին մէջ, հիմնական դեր մը պէտք է խաղայ: Հանդուրժող կեցուածքն ու հաւաքական ներկայացուցչական դրութիւնը ազգային կառոյցներու մէջ, պէտք է մենաշնորհը դառնայ ինքզինք յարգել գիտցող բոլոր բաղադրատարրերուն:

Հայրենի Պետութիւնը, ի՛նք պիտի ըլլայ միակն ու առաջինը՝ այս «կանաչ ազդալոյս»ին նշանը տուող նոր համակարգին, երբ կը հաւատայ կարելիութեանը Մէկ եւ Ամբողջական Հայաստան. Մէկ Հայ ժողովուրդ եւ Մէկ Հայց. Առաք. եկեղեցի կարգախօսին որուն զինուորագրեալներն ենք մենք, ունկնդիր՝ մեր միլիոնաւոր նահատակներու երազին, տեսիլքին եւ արեան կանչին:

ե) Խորհրդային կարգերու ինքնալուծարումով սկիզբ առած Հայաստանի վերանկախացած պետականութեան առաջին քսանամեակին արձանագրուած սպիտակ արիւնսահոսութիւնը՝



Իմա՛ ԱՐՏԱԳԱՂԹը, 1990-ի 3.75 միլիոն ազգաբնակչութեան թիւին նուագումով հասած է մերօրեայ 2.5 միլիոնի: Բայց եթէ, կը հաւատանք ՀԱՅՈՒՆ ՈՒԺԱԿԱՆՈՒԹԵԱՆ, մեզի համար պարտադիր է մեր աչքերը յառել ԱԶԳԱՀԱԻԱՔԻ կենարար ՈՒԺԻՆ, ու հնգամեայ փլաններով զայն հասցնել 5 միլիոն հայ ազգաբնակչութեան:

Ահաւասիկ մեծագոյնը մարտահրաւերներուն, գոր կը դիմագրաւէ հայրենի պետականութիւնը այսօր:

Ինչո՞ւ եւ ինչպե՞ս հայրենաբնակ հայութիւնը իր մէկ-երրորդով լքեց հայրենի տունն ու տեղը եւ հաստատուեցաւ օտար երկիրներու տակ: Վիճակագրութիւնները մեզի կու տան հարուստ տուեալներ եւ նիւթեր: Համակարգչային հաշուարկումները կը դիրացնեն հարցերուն ուղիղ պատասխանները:

Ցեղասպանութեան 100-ամեակի ներկայ հանգրուանը ճակատագրական ու բախտորոշ կրնայ հանդիսանալ հայ ժողովուրդին համար՝ ընդհանրապէս:

Հայկական դիւանագիտութեան կարելիութիւնները եղած են սահմանափակ, նկատի ունենալով մեր ազգային լիիրաւ անկախութեան համեմատաբար կարճատեւ շրջանները:

Հարկ է որ ըլլանք զգոյշ եւ սթափ:

Այնքան դիրահաւատ չենք, որ կարենանք երկու տարի ետք տեսնել «Անկարելին՝ կարելի»:

Մենք ունինք համազգային տեսիլք ու տեսլական, որուն իրականացումին կը հաւատանք աննահանջ ՀԱԻԱՏՔով:

Մինչ այդ, պատրաստ ըլլանք դիմակալելու ամէն մարտահրաւեր ու զոհողութիւն, յանուն մեր անժամանցելի դատին եւ ապագայի յաղթանակին:



Տեսակէտ

«Չէզոք»ութենէն Ասդին Եւ Անդին

Պարոյր Աղպաշեան, Պէյրութ, 7 Մայիս 2014

Քեսապին պատուհասած տխուր ճակատագիրը, իր արտաքին թէ ներքին գործօններով, կլանած է աշխարհը, բայց, մանաւանդ հայ ժողովուրդը, հայաստանեան, դարաբաղեան թէ սփիւռքեան հատուածներով:

Շատ բնական երեւոյթ է ասիկա, բայց, անբնական է, երբ ոմանք իրենց երեւակայութեան կու տան թռիչքներ, մեկնաբանութեանց՝ ապատեղեկութիւններ, յաճախ քննարկումներու մակերեսայնութեամբ ու վերլուծումներու ալ՝ խակութիւններով:



Աւելի ահաւորը այն է, երբ ազգային-քաղաքական կամ ընկերային-հասարակական կեանքին մէջ կը յայտնուին դեղնակտուցներ, որոնք յորդոր ու քարոզ, դաս ու իւելք տալու ցնորամտութեամբ, հրապարակը կ'ողողեն իրենց աղմկարարութեամբ ու շաղակրատութեամբ:

Քեսապի ողբերգութեան ու տագնապի պարագային, օրինակ, շատ կը խօսուի «չէզոք»ութեան մասին, իր խայտաբղէտ որակումներով, տարբերակներով ու թարգմանութիւններով:

Մինչեւ այս հարցին աւելի խոր անդրադարձումը, անհրաժեշտ է յստակացնել հետեւեալը, գոնէ, անգամի մը համար, հրապարակելի թափանցիկութեամբ.

Մեծ Եղեռնէն ետք, տարասփռուած հայութիւնը կայք հաստատած երկիրներուն մէջ ապրեցաւ արժանապատիւ կեանք, իր աշխատասիրական, ստեղծագործական, շինարարական ու քաղաքացիական պարտականութիւններով, պարկեշտ ու նուիրեալ համայնքի անուն շահելով:

Ասպնջական այդ հիւրընկալ երկիրներէն առաջինը եղաւ Սուրիան, որ իր թելերը եւ դռները լայն բացաւ, թէ՛ մարդասիրական, թէ՛ բարեկամական առումներով, որոնց նկատմամբ սուրիահայութիւնը եւ ընդհանրապէս հայութիւնը մեծապէս երախտապարտ են:

Այսօր, աւելի քան երեք տարիէ ի վեր, Սուրիան մխրձուած է (մխրձա՛ծ են) անագորոյն քառսի մը մէջ, սկիզբը ընդունելի լուրջ ընդդիմութեամբ, ապա՝ անընդունելի արկածախնդիր ահաբեկչութեամբ, որոնց տխուր հետեւանքները տակաւ կը շարունակուին:

Այս պարագային, ինքնին հարցադրելի չէ՞, «չէզոք»ութիւնը ինչպէ՞ս եւ ո՞ր կրնայ ըլլալ, կիրարկուիլ կամ խորաչափուիլ:

Անտարբերութեա՛մբ՝ ո՛չ:



Կողմնակալութեամբ՝ ո՛չ:

Դիտողականութեամբ՝ ո՛չ:

Դասալքութեամբ՝ ո՛չ:

Ծայրայեղութեամբ՝ ո՛չ:

Չէզոքութեամբ՝ ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ո՛չ:

Ահաւասիկ այս «չէզոք»ութիւնն է, որուն մասին շատ կը խօսուի, առանց խորանալու անոր քաղաքական-քաղաքացիական լայնահունչ բովանդակութեան մէջ:

Երբ Սուրիան կը փորձեն արմատախիլ ընել իր էութենէն, յայտնի չարագործներու դաւադրութեամբ ու մարգուած վարձկաններու ձեռամբ, կրնա՞յ ըլլալ որ պետութիւն հասկացողութիւնը եւ ահաբեկչութիւնը դրուին նոյն նժարին վրայ ու չարտայայտուիլ մէկուն կամ միւսին մասին:

Ո՞վ պիտի արգիլէ ասպնջականութեան երախտագիտութեան մասին արտայայտուելէն կամ պիտի խուսափի գայն յիշելէն:

Եթէ նախագգուշութիւնն ու վնասագերծութիւնը կը պահանջէին (՞) այդ մօտեցումներու որդեգրումը, ապա, ինչպէ՞ս բացատրել բարի, ազնիւ եւ օրինակելի Քեսապցի քաղաքացիին ու հայապատկան աւանին վրայ կատարուած հրոսակային արշաւանքները, չէ՞ որ անոնք «չէզոք» էին, իսկ աստիկա ինչո՞վ օգտակար եղաւ անոնց, ի դէմս թրքաբարոյ ասպատակութիւններուն ու բարբարոսութիւններուն:

Աւելին՝ եթէ Սուրիոյ բարեխնամութեան ու հիւրընկալութեան բարեմասնութիւնները պիտի բարձրաձայնուին, պետական մակարդակով, յանցա՞նք գործուած կ'ըլլայ, թէ՞ դիմացի կողմը վարկաբեկուած կ'ըլլայ, մնաց որ՝ սուրիահայութիւնը, առանց այդ ալ թիրախ է, իր գոհերով, կրած ւաւերներով ու թալաններով:

Հետեւաբար, անոնք որոնք՝ տեղի-անտեղի, մունետիկութիւն կը խաղան, կոչ ընելով՝ «խոհեմութեան, զգուշութեան, հեռատեսութեան կամ տրամաբանութեան», այդքան տափակնալու պէտք չունին, քանի սուրիահայութիւնը՝ ի՛նք ամենէն լաւ գիտէ թէ ինչպէս պիտի շարժի ու գործէ:

Ուրիշ «չակերտ»աւորներ, սզէտօրէն, Սուրիոյ մէջ պատահածները կ'առընչեն կամ կը համեմատեն Լիբանանի մէջ կատարուածին, երբ լիբանանահայութիւնը որդեգրեց «դրական » չէզոքութեան վարքագիծ»ը:

Ողորմելիները կ'անգիտանան որ լիբանանեան պատերազմը, ո՛չ մօտէն, ո՛չ ալ հեռուէն կապ կամ նմանութիւն ունի սուրիական իրադարձութիւններուն հետ, պարզապէս անոր համար, որ նախ՝ անիկա ներհամայնքային կռիւ էր (թէկուզէ հրահրուած դուրսէն), ապա՝ պաղեստինցիները հաշուեյարդարի ենթարկելու դաւ, հուսկ՝ երկիրը մասնատելու փորձ:



Տխուր փաստ է, սակայն, որ Սուրիոյ պարագային, բարեկարգչային պահանջները մոռացութեան գիրկը նետուեցան, մինչ արաբական աշխարհը, Եւրոպան, Ամերիկան «սրբազան պատերազմ» յայտարարեցին անոր դէմ, իբր թէ սուրիացի ժողովուրդը փրկելու ու՛ տեսէ՛ք, թէ ի՛նչ գնով երկիրը քանդուեցաւ, բզկտուեցաւ, ցնցուեցաւ, պարպուեցաւ:

Հոս՝ ո՛ր պէտք է փնտռել «չէզոք»ութիւնը - լռելով, դիտելով ու համակերպելով, թէ՛ դիւանագիտական ճկունութեամբ ու ձեռնհասութեամբ, որոնցմէ զուրկ չէ սուրիահայութիւնը:

Մարդիկ ինչո՞ւ կը մոռնան (կամ կ'ուզեն մոռնալ), որ հոն կայ պետութիւն ու բանակ, իսկ անոնք համալրուած են նաեւ հայերով, որոնք բազմաթիւ պարտաւորութիւններով օղակուած են անոնց եւ այլ կառոյցներու հետ:

Կը նշանակէ թէ՛ ա՛յս պարագային մանաւանդ, «չէզոք» մնալը ոչ փրկութիւն է, ոչ ալ առաքինութիւն, ինչպէս «խելք» կու տան շատեր, շա՛տ պարզ տրամաբանութեամբ մը, որ մեր ապրած երկիրներուն հետ չենք կրնար վարուիլ «պանդոկ»ային չափանիշերով:

Վերջին հաշուով, հայերը ո՛չ զէնք բռնեցին, ո՛չ սպանդ կազմակերպեցին, ո՛չ ալ առեւանգեցին, ուրեմն, ինչո՞ւ «չէզոք»ութիւնը, կ'որձեւեզուի, սխալ կը բացատրուի կամ կը մեկնաբանուի, երբ պետութեան զօրավիգութեան մասին կը խօսուի, ա՛յն պետութեան, որ սկիզբէն ի վեր բարեպատեհ պահեր ստեղծեց ու ձեռնտու պայմաններ պարգեւեց:

Այս ուղղութեամբ ուշագրաւ դիտարկում մը եւս.

Ամերիկայի նախագահ Պարաք Օպաման, «ռամպօ»ական ոճով մը, երբ սպառնաց ներխուժել Սուրիա (նոյնհետայն սմբելով ու հրաժարելով այդ նուաճողական արկածախնդրութենէն), Լիբանանի մարոնիներու պատրիարքը, յանդուգն յայտարարութեամբ մը դատապարտեց այդ մէկը, զայն նկատելով անհանդուրժողական արարք, միաժամանակ խօսելով քրիստոնեաներու անվտանգութեան մասին:

Հայութենէն՝ որեւէ՛ կողմ, եկեղեցական թէ քաղաքական, ի՞նչ ըրաւ, ինչպէ՛ս հակազդեց կամ ինչո՞ւ լռեց: Միայն «չէզոք»ութիւն պահեց ու խաղաց, բայց, տեսանք թէ քրիստոնեաները ինչպիսի՛ ճիւղներու բռնութիւններուն ենթարկուեցան, որոնց վերջինը (թերեւս ո՛չ վերջնագոյնը)՝ Քեսապն ու քեսապահայութիւնը:

«Չէզոք»ութիւնը լաւ բան է, նայած թէ՛ ո՛ր եւ ինչպէ՛ս, որո՛ն հետ ու դէմ, որովհետեւ կան անոր պարտուողական եւ ենթակայական, նաեւ՝ յաղթական ու խաղաղասիրական տեսակները:

Զգուշանալ առաջինէն, հետեւի՛լ՝ երկրորդին, եթէ դարձեալ ուշ եւ ուշացած չենք:

Ո՞ՒՐ Է ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Հաւանաբար շատեր առարկեն, որ անիմաստ է հոգեւորական բառը գործածել այս պարագային, երբ ոչինչ կայ հոգեւոր անոնց կենցաղին մէջ (բացառութիւնները միշտ յարգելի): Բայց եւ այնպէս, յարգած ըլլալու համար Եկեղեցոյ աւանդութիւնները, պիտի փափաքինք այդ անուանումով դիմել իրենց, նամանաւանդ ա՛յս յօդուածին մէջ, ուր մեր խօսքը կ'երթայ ուղղակի իրենց՝ Հայց. Եկեղեցոյ հոգեւորականութեան:



Ուր՞ են այն մետաքսեայ մանիշակագոյն հագնող «բարձրաստիճան» հոգեւորականները, որոնք կը յաւակնին կարծել որ Եկեղեցին աւատապետական սեփականութիւն մըն է ուր կարելի է չարաշահել հաւատացեալ ժողովուրդի ամենաթանկագին եւ ազնուագոյն զգացումները: Դժբախտաբար շատեր չեն վարանիր նոյնիսկ, եւ կը յանդգնին կարծել՝ որ Եկեղեցին իրենց սեփական կրպակն է-- եկամուտի լաւագոյն աղբիւրը՝ սնուցանելու

իրենց անյագուրդ տենչերը ամբարտաւանութեան, բղջախոհութեան, ազահութեան եւ փառամոլութեան:

Վաղո՛ւց անցեր են այն օրերը, երբ մարդիկ կը կարծէին որ կարելի չէ խօսիլ եւ քննարկել Եկեղեցոյ եւ եկեղեցականներու մասին, ասիկա նկատելով մեղանշում աւանդական սովորութիւններու դէմ: Ընդհակառակը, եթէ ունինք ներքին տառապանքը որ կը բխի մեր խոր բժախնդրութենէն Հայց. Եկեղեցոյ եւ եկեղեցականի կոչումին նկատմամբ, անհրաժեշտ է որ յայտնենք մեր կարծիքները, եթէ կ'ուզենք փրկել Եկեղեցին «հոգեւորական» կոչուած աւատապետներէն:

Ժամանակը հասած է եւ անցած է նոյնիսկ: Այլեւս փսփսուքով եւ բամբասանքով չխօսինք Եկեղեցին եւ եկեղեցականութիւնը յուզող հարցերու մասին, այլ ընհակառակը բարձրացնենք մեր արդար ձայնը, եթէ մտահոգ ենք մեր Եկեղեցոյ գոյատեւման պայքարով եւ անբասիր հոգեւորականութիւն ստեղծելու տեսլականով:

Անկասկած որ Հայց. Առաքելական Եկեղեցին իր անկման ճանապարհին է այսօր, եւ մեր բոլոր Նուիրապետական Աթոռներու (Էջմիածին, Անթիլիաս, Երուսաղէմ, Պոլիս) բարձրաստիճան հոգեւորականները անհասկնալի, ե՛ւ դատապարտելի, անտարբեր լռութեամբ մը կը դիտեն ժողովրդային պոռթկումները, Մոսկուայէն մինչեւ Հայաստան, Նիսէն մինչեւ Ժընև եւ Գանատայէն մինչեւ Միացեալ Նահանգներ:

Բոլոր անոնք որոնք առիթը չեն ունեցած ընթեռնելու վերջին մէկ ամսուան մէջ հայկական մամուլին մէջ հրատարակուած տխուր, ողբերգական եւ խռովալից յօդուածները, կ'առաջարկենք որ ընթեռնուն ներքեւ տեղադրուած կայքէջերը եւ հաղորդ դառնան այն



բոլոր իրողութեանց որ կ'ալեկոծեն եւ կը փոթորկեն Եկեղեցին, այսինքն՝ նոյն ինքն ժողովուրդի կեանքը:

<http://my.mamul.am/am/post/30704/>

<http://my.mamul.am/am/post/30660/>

<http://hraparak.am/news/view/55593.html>

<http://m.youtube.com/watch?v=TFxD7daWAW4>

<http://hraparak.am/news/view/55537.html>

<http://www.lragir.am/index/arm/0/society/view/99387>

<http://www.lragir.am/index/arm/0/society/view/99419>

<http://www.lragir.am/index/arm/0/country/view/99315>

<http://www.lragir.am/index/arm/0/society/view/99331>

<http://norlur.am/?p=55751>

ԱՅՍ ԻՆՉ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Է...: Հասած է ժամանակը որ հայ հոգեւորականութիւնը աւագէն դուրս հանէ իր գլուխը այլեւս եւ միանգամ ընդմիջտ փրկէ իր արժանապատուութիւնը՝ յանուն մեր բազմաշարժար սուրբերու, մարտիրոսներու եւ նահատակներու սրբազան կտակին:

Ինքնախաբէութիւն պիտի ըլլայ յայտարարել թէ խնդիրներ չկան այսօր մասնաւորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, եւ ամէն ինչ հեզասահ կ'ընթանայ հոգեւորականութեան կեանքէն ներս: Մամուլին մէջ շօշափուած եւ վերեւ յիշուած յօդուածները կ'արհնեն մեր սիրտն ու հոգին եւ կը փոթորկեն մեր հոգեւոր ներաշխարհը: Ինչպէ՞ս կարելի է անտարբեր մնալ եւ չուզուիլ ի տես այս հոգեւոր փլուզումին, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել «ցունամիին», որ իրեն հետ պիտի տանի եւ խորտակէ մեր դարաւոր սրբութիւնները:

Յաճախ կը կարդանք, նամանաւանդ Ս. Աթոռի դիւանատան հաղորդագրութեանց մէջ, թէ այդ բոլոր մամուլի յօդուածները մասնաւոր դիտաւորութեամբ գրուած են, անարդար եւ յանդուգն քննադատութեան թիրախ դարձնելով Հայաստանեայց Եկեղեցին, նամանաւանդ Ս. Էջմիածինը: Այս անհեթեթ յայտարարութեանց հեղինակները՝ չարաչար կը սխալին, որովհետեւ զուսպ եւ հաւասարակշռուած քննադատութիւնը յառաջ կու գայ Հայ Եկեղեցոյ եւ հայ հոգեւորականութեան հանդէպ անոնց ունեցած բժախնդրութենէն:

Կրնա՞նք յայտարարել որ վերջին շրջանին Հայ Եկեղեցոյ կեանքին մէջ տեղի ունեցող իրադարձութիւններու շղթան մեզ չի մտահոգեր: Անկասկած ՈՉ: Այսօր կ'արտայայտուին ո՛չ միայն անարդարութեան զոհ գացող հոգեւորականները, այլ նաեւ բարձրագոյն ուսման տէր անձեր, ակադեմական գրիչներ՝ Հայաստանէն եւ Սփիւռքէն, որոնք մտահոգ են Եկեղեցոյ ապագայով եւ չեն կրնար անտարբեր մնալ հակակառնական եւ կամայական կարգազրկումներու անձայրածիր շղթային հանդէպ:



Անգամ մը եւս կ'արժէ այստեղ ամրագրել, որ Հայց. Եկեղեցին եղաւ մեր գոյութենական պայքարի ամրակուռ բերդը, որ պահեց մեզ դարերու ընթացքին, կուրծք տալով կրօնական եւ քաղաքական բոլոր ոտնձգութիւններուն եւ արշաւանքներուն: Ժամանակն է որ արթնանք, հասկնանք եւ ըմբռնենք իրողութիւնն ու ճշմարտութիւնը, թէ ՄԵՆՔ ԵՆՔ ԵԿԵՂԵՑԻՆ՝ իր անցեալով, ներկայով եւ ապագայով: Հայց. Եկեղեցին է՛ եւ կը մնայ ու կը մարմնատրե՛ հայ ժողովուրդի ազատ խիղճը, եւ կը խորհրդանշէ անոր հաւատքի նուիրականութիւններու ակը:

Ասկէ առաջ բազմիցս յայտարարած ենք որ զանցառու եւ շահախնդիր դիրքորոշում մը որդեգրած են մեր «ազգային ղեկավարները», մասնատրաբար Սփիւռքի տարածքին, զանազան խմբական եւ անհատական շահերէ մեկնելով: Որքան որ դատապարտելի է բարձրաստիճան հոգեւորականութեան կրաւորական եւ ստրկական վիճակը, նոյնքան եւ առաւել եւս դատապարտելի է մեր քաղաքական եւ կուսակցական կազմակերպութիւններուն, կրթական, բարեսիրական հաստատութիւններուն, մտաւորականութեան եւ հայ մամուլին դրսեւորած անտարբերութիւնն ու անհոգութիւնը:

Եթէ այսպիսի ճգնաժամային օրերուն, երբ հայ մամուլի էջերուն մէջ կը կարդանք եւ կը զգանք հայ հաւատացեալին արդար պոռթկումը՝ ի տես այս բոլոր անիրաւութիւններուն, երբ ալեկոծուած է իւրաքանչիւր հայու հոգին, երբ ծովամոյն ըլլալու վտանգին առջեւ է Հայց. Եկեղեցւոյ պատիւնն ու հոգեւորականութեան արժանապատուութիւնը, ապա ե՞րբ պիտի ունենանք քաջութիւնը յայտարարելու՝ Ա՛՛Լ ԿԸ ԲԱԻՒԷ.....

Ի՞նչ եղած է մեր բարձրաստիճան հոգեւորականութեան որ դժբախտաբար ըսելիք չունի այսօր: Գերապատիւ թէ Սրբազան Հայրէ՛ր, եթէ «հանրածանօթ» Տէր Վաչէ Հայրապետեան մը Ամենայն Հայոց Հայրապետին պատիւն է, արդե՞օք Տէր Մարտիրոսի սքեմը ձեր պատիւը չէ...: Վաղուան մտահոգութեամբ տառապող համասփիւռ հայութիւնը, նամանաւանդ Մոսկուայի երիտասարդութիւնը, կը փոթորկի իր տազնապներով՝ կրօնական, ազգային, ընկերային եւ կրթական-մշակութային բոլոր ոլորտներու մէջ, մեր ազգային ցաւերուն լուծումներ ու դարմանումներ գտնելու ազնիւ մտահոգութեամբ եւ ակնկալութեամբ: Դիտեցէ՛ք եւ դուք եղէք արդար դատաւորը:

<http://galatv.am/hy/news/345678906754/#.U30KSOWNeUg>.

facebook

Պէտք չէ շփոթել Եկեղեցին եւ եկեղեցականութիւնը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կը մնայ որպէս իւրաքանչիւր հայու հոգեւոր սնունդի ակնաղբիւրը եւ իր հոգեւոր կարիքներու գոհացման օրրանը: Կասկած պէտք չէ արթնայ ոեւէ հայ անհատի մտքին մէջ, որ եթէ քննադատութիւններ կան այսօր, --ինչպէս եղած են ե՛ւ անցեալին,-- Մայր Աթոռի թէ՛ այլ նուիրապետական Աթոռներու հանդէպ, այդ բոլորը ծնունդ են պարզապէս այն լուրջ մտահոգութեանց զորս ունինք մեր Եկեղեցւոյ եւ ազգի նկատմամբ, որովհետեւ կը փափաքինք մեր Եկեղեցին իր Նուիրապետական Աթոռներով անեղծ պահել՝ այնպէս ինչպէս պիտի ուզէինք պահել ու պահպանել մեր հարազատ ընտանիքը:



Անաստուածութեամբ դաստիարակուած սերունդ մը, որ միայն իշխանութիւն կը հետապնդէ բրտութեամբ եւ բռնութեամբ, չի՛ կրնար ղեկավարել Եկեղեցին, որ հիմնուած է սիրոյ, եղբայրութեան, համերաշխութեան, հաւատարմութեան գերագոյն սկզբունքներու վրայ: Եկեղեցականութիւնը՝ որպէս յանձնառու աւանդապահ մեր դարաւոր սկզբունքներուն, պարտաւոր է հաւատացեալը մօտեցնել իր ինքնութեան եւ հաւատքին, եւ ո՛չ թէ հեռացնել զայն իր անյարիր եւ այլանդակ, ո՛չ քրիստոնսավայել գործունէութեամբ: Այլ խօսքով՝ ՎԵ՛ՐՁ՝ տիրելու եւ ղեկավարելու անյագուրդ կիրքերուն:

Կրօնական եւ համագգային ցաւերու մասին երբ կ'արտայայտուինք բեմերէն եւ կամ մամուլով, ու երբ մանաւանդ կատարուած վերլուծումներն ու առաջարկները շինիչ են եւ կը ծառայեն ժողովուրդը արթնութեան հրաւիրելու, պէտք է ընդունինք նման քննադատութիւններ: Դառն ճշմարտութիւնները տխուր են եւ կը վրդովեն մեր հոգին: Սակայն եւ այնպէս եթէ չխօսինք եւ չգրենք մեր թերութիւններու մասին, ոչինչ կը փոխուի մեր կրօնական, ազգային-հասարակական կեանքին մէջ եւ կը վերածուինք խուժան հասարակութեան:

Ո՞վ կրնայ ուրանալ որ դժուարութիւններ չկան մեր կրօնական եւ ազգային կեանքին մէջ, երբ ամէն օր կը կարդանք ատոնց մասին մամուլի եւ համացանցի էջերուն վրայ: Դժբախտաբար նորօրեայ սփիւռքահայ «ղեկավարները» ոչինչով կը յիշեցնեն անցեալի այն արժանաւոր երախտաւորները, որոնք կրցան տեսիլք ունենալ ու իրենց մտքի եւ փորձառութեան հզօրութեամբ կազմակերպել հայ արտաշխարհը՝ իր բազմերանգ կարիքներով:

Ժամանակը հասած է որ բարոյական սկզբունքներով տոգորուած նուիրեալ եւ հաւատաւոր անձինք ձեռք առնեն Եկեղեցին եւ աշխատանք տանին վերականգնելու հայուն հաւատքը դէպի իր Մայր Եկեղեցին: Դուրս շարտել այն հոգեւորականները որոնք կը չարաշահեն հայ ժողովուրդին ակորնչելի կապը իր պապերու հաւատքին հետ: Անհրաժեշտ է կատարել աշխատանքային նոր բաժանում, որպէսզի Հայը, նամանաւանդ Սփիւռքահայը գոյատեւէ իր հազարամեայ հաւատքով, եւ այդ հաւատքին կապուած իր ոսկեղինիկ Սահակ-Մեսրոպեան լեզուով եւ մշակոյթով:

Եւ վերջապէս՝ ՀՈԳԵԻՈՐ ՆՈՐ ԴԱՐՁԻ մը ոտնաձայնը եւ կը լսեմ.....

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

30 Մայիս 2014

Հայաստանի Հանրապետութիւնը Եւ Արեւմտահայաստանի Ազատագրութիւնը

Այս «ԱՊՐԻԼ 24»-ն ալ անցաւ: Խանդավառող եւ յուզող ճառեր՝ բարեկամ օտարներէ լսուած, ինչպէս որ սովորութիւն է: «Յեղասպանութիւնը ճանչնալու-ճանչցնել»-ու զարդարանքը նոյնն էր, ինչպէս՝ անցեալ տարի: Այսինքն «զիս սպասէ ես կու գամ»-ի եղանակը՝ զանազան ձեւերով կրկնուած: Երաժշտութեան մէջ ծանօթ «Լ'Արլէզեէն»-ին պէս:



Ինչո՞ւ մենք չենք ըսեր, նախ մենք, որ ցեղասպանութիւն գործուեցաւ հողի համար: Ինչո՞ւ մեզ սիրող, մեզի համար սիրելի մեր բարեկամները, ցեղասպանութեան, արեան, տառապանքի, ջարդի, անմարդկային արարքներու յիշեցման կողքին, չեն խօսիր հողի տիրացման համար գործուած ցեղասպանութեան մասին, քանի որ ան է բացատրութիւնը, եւ եթէ լուծում կարելի պիտի ըլլայ օր մը, այդ

հանգոյցը պէտք է քակել: Պատահածը ո՛չ քրիստոնէական, ո՛չ իսլամական հաւատքի խնդիր էր:

Տասնամեակներէ ի վեր հայ հանրային կարծիքը զբաղեցնող եւ ենթադրաբար միջազգային շրջանակները լուսաբանելու կոչուած Յեղասպանութեան որպէս այդպիսին փաստելու իմաստուն-գիտական ճիգերը եւ սպառումը թմրեցուցին հայ ազգային քաղաքական միտքը՝ ուշադրութեան կեդրոնը տեղափոխելով կեանքին խօսքի մակարդակ: Մեր «բարեկամներ»-ը մենք վարժեցուցինք այդ ընելու:

Մինչեւ Լոս Անճելըս պիտի գայի լսելու համար Մարի-Ռոզ Ապուսեֆեանի անշպար խօսքը, որ գրուած-ըսուած է այլ եղանակներով եւ այլ երկինքներու տակ, առանց լսող գտնելու, որ այս պարագային ծափահարուեցաւ, այդքա՛ն, արեւու մայրամուտին հետ մոռցուելու համար, Մոնթեպելլոյի յուշարձան-կոթողին շուրջ գտնուող ինքնաշարժները երբ հեռացած ըլլան Քալիֆորնիոյ գրեթէ անսահմանութեան մէջ:

Փաստի, պատմագիտական եւ փաստագրական աղմկարարութիւնը «Հայկական հարց»-ը նստեցուցած է սպասման սենեակներու մէջ եւ վնասազերծած է այն, ինչ որ սովորութիւն դարձած է «Հայ դատ» կոչել: Անհանգստացող չկայ: «Հայ դատ», որ շարունակութիւնն է միջազգային քաղաքական շրջանակներու երկու հարիւր տարիէ ի վեր ծանօթ «Հայկական հարց»-ին:

Բարոյական պարզեւի եւ մխիթարութեան ակնկալութենէ եւ շնորհէ անդին չանցանք, ազգովին, եւ զինովցանք շոայլուած աղուոր խօսքերով, որոնք իրաւունքի վերահաստատման յանձնառութիւն չէին:

Անշրջանցելի իրատեսութիւնն է, որ իսկական քաղաքական ներկայացուցչութիւնն է Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը՝ վերանկախացումէն ի վեր: Բայց ան, քայլ պահելով դասական դարձած կեցուածքի հետ, Յեղասպանութեան հարցին տրուող



պատմագիտական եւ բարոյական արժեւորումով կը գոհանայ եւ «Հայկական հարց»-ը որպէս ազգային-քաղաքական խնդիր իր արտաքին յարաբերութիւններուն մէջ, մասնատրաբար Թուրքիոյ հետ, չ'արձանագրեր որպէս առաջնահերթութիւն: Կրնայ առարկուիլ, որ դիւանագիտական ըմբռնումներու հակառակ է այդ եւ կը խանգարէ դրացիական յարաբերութիւնները (որոնք չկան): Ինչո՞ւ չ'խորհիլ, որ ճիշդ, մտածուած եւ հետեւողական դիւանագիտական յարաբերութիւններու ճամբով կարելի է երկխօսութիւն հաստատել, հարցերու աստիճանական լուծման ճամբայ հարթել:

Եթէ պետութիւնը չյաջողի, չուզէ կամ անկարող ըլլայ դիւանագիտութեան օրակարգ դարձնել «Հայկական հարց»-ը, անհատներ կամ սփիւռքի կազմակերպութիւններ ինչպէ՞ս պիտի կարենան այդ ընել: Օտարներու զօրակցութիւնը ապահովել՝ բարոյականէ անդին չ'անցնիր, բացի այն պարագայէն, երբ պետութիւն մը ուզէ իր խնդիրներու կարգադրութեան համար օգտագործել «Հայկական հարց»-ը եւ մեր միամտութիւնը: «Հայկական հարց»-ը քաղաքական օրակարգ դարձնելու համար ներկայ պէտք է ըլլալ եւ «ուժ» ունենալ: Խօսքի պղպշակները ուժը չեն փոխարիներ:

100-ամեակի մարմիններ ստեղծուած են: Գիրքեր պիտի հրատարակուին: Կրկին: Տոյցեր պիտի ըլլան: Կրկին: Ոչ իսկ ցոյց, այլ՝ տողանցքներ: Տուցադրական՝ ցուցականէ աւելի: Եթէ Հայաստանի Հանրապետութիւնը «Հայկական հարց»-ը չուզէ միջազգայնացնել՝ ներկայանալով որպէս պահանջատէր, այս կամ այն համայնքի յանձնախումբերը ո՞ր դռնէն պիտի մտնեն իսկական քաղաքական առաջադրանք հետապնդելու համար, ո՞վ, որո՞նք եւ ո՞ր պիտի լսեն հայկական պահանջները: Ինչպէ՞ս լսելի պիտի դարձնենք զանոնք:

Ինչ կը վերաբերի այդ պահանջներուն, այժմեականացուած եւ համազգային համախոհութեամբ բանաձեւուած են անոնք: Միակ բանաձեւումը, որ կայ, Սեւրի դաշնագիրն է եւ անոր որպէս գործադրութիւն՝ Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսոնի գծած սահմանները, որ նոր համաձայնութեան չէր կարօտեր, քանի որ որոշման մը գործադրութիւնն էր: Միացեալ Նահանգներու խուսափումը դրժումն էր յանձնառութիւններու՝ վասն ռեալ փոփոխիքի:

Գաղափարական եւ քաղաքական աշխատանքի ուղեգիծ ունի՞նք՝ որպէս հայ ժողովուրդի մնացորդաց մէկ միլիոնէ աւելի Թուրքիոյ տարածքին ապրող հայութեան անունով պահանջատիրական արշաւ կազմակերպելու, պայմանաւ որ այդ հայերը ընդունին, որ իրենց անունով «Հայկական հարց» հետապնդուի: Անոնք այսօր կրնան հանդիսանալ միջազգայնօրէն ընդունելի քաղաքական ազդակ: Ցարդ անոնք չեն ներառուած քաղաքական կեանքին մէջ: Հոս եւս Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս իրաւասու անդամ միջազգային կազմակերպութիւններու, կրնայ դիմել նախաձեռնութիւններու: Սփիւռքը կրնայ զանազան բնոյթի օժանդակութիւններ բերել եւ ծառայութիւններ մատուցել: Հաւանօրէն յաճախ պէտք է կրկնել, որ Հայաստանի Հանրապետութիւնը կոչուած է բանալի դերի, եթէ ի հարկէ ուզէ:

Ոգեկոչումները աւարտեցան: 365 օր մնացած է սպասուող «Ֆեթիշ» թուականին: Եթէ «Հայկական հարց»-ը մինչ այդ չքաղաքականացուի, ի՞նչ պիտի ըսուի մեր ժողովուրդին եւ



միջազգային համայնքին: Առանց այդ քաղաքականացման, մենք մեզ, եւ՝ օտարները մեզ, լուրջ պիտի համարե՞նք, պիտի համարե՞ն: Հարցումը պէտք է ուղղել առանց ճապկումներու եւ պատասխանել նոյնպէս առանց ճապկումներու:

Տիգրանակերտի վերկառուցուած եկեղեցիին մէջ մատուցուած պատարագը, սրտցաւ թուրք մտաւորականներու զօրակցութիւնը եւ բացայայտումները ենթահող են քաղաքական աշխատանքի, կը նպաստեն Յեղասպանութեան որպէս այդպիսին ճանաչման, բայց «Հայկական հարց»-ի միջազգայնացում չեն:

Առանց զգացականութեան, մեր հայեացքը այս կամ այն պետութեան կամ միջազգային մարմիններու ուղղութեամբ սեւեռելու, նախ սեւեռենք դէպի Հայաստանի Հանրապետութիւնը՝ առանց գոհանալու երեւելիական խաբուսիկ բաւարարութիւններով: Ի՞նչ պիտի ընէ ան, եւ չ'ըներ «Հայկական հարց»-ը քաղաքականացնելու համար:

Եթէ խորհրդային օրերուն ըսող եղաւ, որ Հայաստանի կառավարութիւնը ամենայն հայոց կառավարութիւն չէ, ներկայ վերանկախացած Հայաստանի Հանրապետութիւնը պարտք պէտք է համարէ, առանց խուսանաւելու, յստակութեամբ արտայայտուիլ, որպէսզի հայրենահանման հետեւանք սփիւռքը թերեւս կարենայ, ցուցական է ցուցադրական անդին, իրաւ ուղի որոնել (եւ գտնել), հանդէս գալ որպէս իրաւատէր եւ պահանջատէր:

Բացի պատկեր ըլլալու քաղքենիական բաւարարութենէ՝ խորհրդածողովները ոչինչ ըսին այս մասին: Ներկայիս բազմիցս կեդրոնական անուններով երթեւեկը եւ լուսանկարներով ուշագրաւ ժողովները պիտի յանգի՞ն քարոզչական-լուսաբանական թափահարումներէ տարբեր քաղաքական նախաձեռնութիւններու: Այս կամ այն առիթով զանգուածները պիտի ըլլան սոսկ հանդիսատէ՞ս, թէ՞ ...

Աւանդական դարձած տեղքայլը դեռ որքա՞ն կրնայ տեւել, երբ գիտենք, որ հայկական համայնքները տեւաբար կ'ապամշակութանան, ինքնութիւն կը կորսնցնեն, կը կծկուին: Այսինքն ուժի եւ յանձնառութեան ենթահողը կը փոքրանայ: Լաւ է զբաղիլ բաժակի լեցուն մասով՝ առանց աչքաթող ընելու դատարկ մասը, ինչ որ պէտք է կոչել իրապաշտութիւն:

Տպաւորող հասարակ տեղիք է ըսել, որ ժամանակը ի նպաստ մեզի չ'աշխատիր: Ինչպէ՞ս այդ ժամանակը մեզի ի նպաստ պիտի աշխատի եւ ո՞ր ազգային հարազատութեան-ինքնութեան որակով պիտի լեցնենք այդ թռչող ժամանակը: Մէկ օրուան հրավառութիւններէն ետք պիտի ուզե՞նք եւ պիտի կարենա՞նք պատասխան ճարել հարցումներուն:

Առանց գոհանալու եղածով՝ լուռ-լռած մեծամասնութիւնը ինչպէ՞ս պիտի բերենք, որպէսզի ան մասնակից ըլլայ պատասխաններու եւ ճարերու որոնման: Այս արդէն ուժի կերտման հեռանկարային օղակ է:

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ



ԽՈՂԻ ԱՎՆԹԱՐԹՆԵՐ

ԾԱԳՈՂ ԱՐՇԱԼՈՅՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ...Ամէն Աստուծոյ օր, արեւածագը կու գայ ցրելու



խաւարը, արեւալոյսով ողողելու աշխարհն ու բնութիւնը, նոր մաքրութեան շունչը սփռելու ամենուր...Ծագող արեգակին հետ, կը վերագարթնու օրը՝ լոյսի ճառագայթներով արբշիռ: Կը թուի թէ մարդ էակն ալ կը վերանորոգուի ամէն օր՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար, աշխատանքի նոր տենդով կը լեցուի, նոր

երագներ կը հիւսէ, յանուն աւելի լաւ գալիքի...բարին կը յաղթանակէ չարին, լոյսը՝ խաւարին: Որքա՛ն երգեր ու տաղեր ունի լուսապաշտ հայ ժողովուրդը ի փառաբանումն առաւօտեան լոյսին, արեգակին արդար, անոր մէջ տեսնելով հոգեկան լոյսի ծագումը իր էութեան մէջ, իմացութեան լոյսի, անով յուսալով՝ ազգի ու հայրենիքի նոր արշալոյսի կերտումը...Արդարեւ, որքա՛ն արշալոյսներ կան, որ պիտի ծագին դեռ...

.....

Ի՛նչ անակնկալներով է յղի կեանքն առհասարակ...Իւրաքանչիւր օր նոր սկիզբ մըն է կարծէք, որ նոյնքան անկանխատեսելի է, որքան խոհերը որոնք մեզի կ'այցելեն տիեզերքի չորս ծագէն, պահ մը նոր փայլատակումով լուսաւորելով մեր մտաւոր աշխարհը...Կը թուի թէ սահման չունի մարդկային միտքը, իմացութիւնը, պայմանաւ որ սակայն ան մնայ խոնարհօրէն եւ ճշմարտօրէն բաց՝ ընկալելու կեանքի ամէնէն պարզ ճշմարտութիւններէն մինչեւ բարդագոյն իրականութիւնները, անկաշկանդ ու անարգել՝ մտքի պատուարներէն, որոնք կանխակալ կարծիքի, նախապաշարումներու եւ այլ մտակաղապարներու ետին թաքնուած, կը խափանեն մտքի ԱԶՍ ԹՌԻՉՔԸ...

.....

Փոքրիկ պատուհանս՝ աշխարհին վրայ բացուած, ինծի կը թուի Աչք մը մեծ հայող երկնքին, մերթ՝ լազուր ու ջինջ, մերթ՝ մառախլապատ, մերթ՝ թափառիկ ամպերով մռայլած ու մթամած...Հաղորդակցութեան թրթիռով կը նայիմ դուրս Բնութեան, Աշխարհին, աղօթքի մը երկիւղածութեամբ համակուած...եւ միտքս ու հոգիս թոյլք կ'առնեն դէպի անհունութիւնը Տիեզերքի, դէպի Անընդգրկելին, Անպարագրկելին...: Ի՛նչ մեծ խորհուրդ կը թուի այս ինծի. փոքրիկ պատուհանէս զգալ անսահմանութիւնը տիեզերական, ինչպէս աննշան թուացող տերեւի մը մէջ զգալ համայն Բնութեան կենսալից տրոփիւնը...

.....

Պահեր կան երբ չես ուզեր որեւէ միտք կամ ապրում կիսել այլոց հետ՝ բարեկամ թէ ոչ-բարեկամ...Կ'ուզես առանձնանալ հոգիիդ խորը եւ մտերմօրէն զրուցել քու խորքային ԵՍ -իդ հետ, որ վերջ ի վերջոյ քու ամէնէն մտերիմ ընկերդ է, գաղտնակիրը, ո՛վ կը հասկնայ, կ'ըմբռնէ քեզ, կը խորզոյ քեզ...ո՛վ երբեմն ալ կը յանդիմանէ քեզ քու ըրածիդ ու չըրածիդ, ըսածիդ ու չըսածիդ համար...ո՛վ կը ճանչնայ քեզ քու հոգիիդ բոլոր ծալքերով, լոյս ու



ստուերով, բիւր երանգներով եւ որո՛ւն միայն կրնաս անվերապահօրէն խոստովանիլ ամէն ինչ անմնացորդ կերպով, ամենայն բացսիրտ անկեղծութեամբ..., ո՛վ երբեք չի դաւաճաներ քեզի, չի լքեր քեզ....Մեր ներքին ԵՍ-ը մեր լաւագոյն ընկերն է....

.....

Ներկայ աշխարհի խառնիճադանճին ու թոհուրոհին մէջ, ճշմարտութիւնը յայտնաբերելը կեանքի մեծագոյն մարտահրաւերներէն մէկն է հաւանաբար, եթէ ոչ՝ գերագոյնը....Օ՛, անիկա այնքան թաքնուած կը մնայ բազմաբնոյթ դիմակներու ետին, կեղծ ու խաբեպատիր խօսքերու եւ շպարներու տակ, մարդկային շահամէտ եւ հաշուենկատ փոխյարաբերութիւններու ներքոյ....Պիտի շարունակ պեղել զայն, փնտռել զայն անխոնջ եւ մշտաբար, առանց ինքնախաբէութեան, առանց օրօրուելու գեղեցիկ պատրանքներու խաբուսիկ հրապոյրէն, շեշտակի նայիլ անոր աչքերուն՝ արիաբար, քանզի առանց ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ յայտնաբերումին, կարելի՞ է երբեւէ հասնիլ խորունկ ինքնաճանաչման եւ մարդաճանաչման....կարելի՞ է ԱԶԱՏԱԳՐՈՒԻԼ....

.....

Մակերեսային մեր ժամանակներուն, այնքա՛ն շատ են վայելքի եւ հաճոյքի վայրերը, բայց որքա՛ն քիչ է ճշմարիտ ու խոր ապրումը....անկեղծ ուրախութիւնը, որ էապէս ոգեկան է: Այնքա՛ն շատ են ուղեղդ մրճահարող տեղեկութիւնները, բայց որքա՛ն քիչ է՝ խորութեամբ մտածելու մղող գրգիռը....Այնքա՛ն շատ են պատրաստի գիտելիքները, նորօրեայ պատրաստի հրամցուած «ֆասթ ֆուտ»երուն նման, եւ այնքան քիչ՝ ձեռքբերովի գիտակցութիւնը, իմացութիւնը, ճանաչողութիւնը, որոնք արդիւնքն են մտամփոփ խոկման, խորհրդածութեան, ապրելու բովէն անցած տառապագին երկունքի, կենսափորձի....: Սա չէ՞ պատճառը, թէ ինչու ուսեալ մարդը, վկայականներով բեռնաւորուած ու յաճախ անոնցով գոռոզացած ալ, շատ հեռու կրնայ ըլլալ Իմաստութենէն, որ բարձրագոյն գիտակցութեան Լոյսն է անկասկած....

.....

Նոր գաղափարներու ՍՈՎ է արդեօ՞ք աշխարհով մէկ: Մարդկային գիտակցութիւնը այնքան է տարրականացած, մակերեսայնացած, որ կարծէք ա՛լ ի գօրու չէ նոր գաղափարներ մտայղանալու, որոնք կարենան յեղաշրջել մարդկային գիտակցութիւնը, նոր որակ բերել մարդկային կեանքին....Իսկ ամէն յառաջդիմութիւն կը սկսի ԳԱՂԱՓԱՐԻ մը հունտով, որ բեղմնաւորուելով կու տայ բազում պտուղներ, մարդկային զարգացման նոր հորիզոններ բանալով: ԱԶԳԱՅԻՆ մեր ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆՆ ալ այնքան լճացած կը թուի ըլլալ, ճահճացած, որ նոր փոթորիկ մը, զուցէ նոր ցնցում մըն է անհրաժեշտ, որպէսզի կարենայ ան նոր թոյլք մը հնարաւորել....Բայց երանի՛ թէ այդ ցնցում-փոթորիկը չասասնէ մեր պետականութեան հիմքերը, կործանարար չըլլայ մեր ժողովուրդին....:

.....



Մարդկային պատմութեան հազարամեակներու փորձը կը յուշէ, որ մեծ գաղափարները մեծ զոհեր կը պահանջեն: Ներկայիս եւս, գուցէ յայտնուին մեծ գաղափարներ, սակայն նիւթն ու նիւթապաշտութիւնը այնքա՛ն են կլանած մարդոց էութիւնը, որ անոնք դժուար թէ զոհեն իրենք զիրենք, իրենց կեանքը՝ յանուն այդ գաղափարներու կենսագործման: Ներկայ աշխարհը կը թուի թէ ՇՆՉԱՀԵՂԶ կ'ըլլայ նիւթի, ինչքի, շուկայիկ «արժէքներու» կապարէ ճնշումին տակ, որոնք որպէս նորօրեայ գերութեան շղթաներ, կը ստրկացնեն մարդ էակի հոգին ու ոգին, խափանելով անոնց ազատ շնչառութիւնը, ազատ ճախրանքը դէպի բաց, անպարագիծ հորիզոններ....

.....

Սպառողական ներկայ քաղաքակրթութիւնը կարծէք կը միտի ստեղծելու այնպիսի մարդ էակ թէ հաւաքականութիւն, որ ըլլայ դիրաւ կառավարելի, գովազդուած ուտելիքներով սնուող, հագուստ-կապուստը կապկոդ, ապրելաձեւը ընդօրինակող....շատ հարցեր չտուող, ինքնութենէ ու անհատականութենէ զուրկ զանգուած-ամբոխ մը, կամ խառնամբոխ մը....Մարդ-անհատականութիւնն ու Ազգը, սակայն, կը մերժեն ենթարկուիլ նման ամբոխացման գործընթացին, քանզի կայացած մարդն ու ազգը ունին սկզբունքներ, արժէքներու համակարգ, անհատականութիւն ու նկարագիր, գիտակցութիւն եւ ոգի....որոնք կ'երաշխաւորեն իրենց ազատութիւնն ու արժանապատուութիւնը....

.....

«ՈՍԿԵԱՅ ՄԻՋԻՆԸ» կը դաւանէր մեծն փիլիսոփան՝ Արիստոտելը...բայց միթէ՞ սերը, նուիրումը, քաջութիւնը, բարութիւնը եւ շատ ու շատ առաքինութիւններ կամ բարոյական-հոգեւոր յատկանիշներ պիտի սահմանափակուի՞ն «ոսկեայ միջին»ի մէջ: Անոնց բուն արժէքը անպարագիծ, անսահման ըլլալնուն մէջ չէ՞ արդեօք: Ի՞նչ պիտի արժէր, օրինակ, սերը, եթէ սահման մը դրուէր անոր բխումին...նմանապէս, ի՞նչ արժէք պիտի ունենար բարութիւնը, եթէ որոշ սահմանէ մը անդին անիկա դադրէր գոյութիւն ունենալէ, կամ նոյնիսկ՝ վերածուէր չարութեան....Երբեմն, կարծէք գոց սորվածի պէս, կը կրկնենք լոզունգներ կամ կարգախօսներ, առանց խորանալու անոնց ենթաիմաստներուն մէջ....Իւրաքանչիւր բառ կամ եզրոյթ, կամ նախադասութիւն կրնայ հանրային գիտակցութիւն կազմաւորել....իսկ անոնց ճիշդ օգտագործումը իւրաքանչիւրիս պատասխանատուութիւնը չէ՞ արդեօք....

.....

Ձեւականութիւնն ու մակերեսայնութիւնը այնքա՛ն շատ տեղ գրաւած են մեր կեանքին մէջ, որ երբեմն մեքենականօրէն կ'ընենք բաներ՝ սովորութեան ոյժով միայն, կամ ալ ընկերային ընթացիկ ձեւականութեանց կամ կեղծ բարոյականութեան անձնատուր....Եթէ կարենայինք նորովի մտածել մեր առօրեայ վարք ու բարքին մասին, զատորոշելով էականը՝ ձեւականէն,



կարենորը՝ անկարենորէն, գուցէ յայնժամ մեր կեանքը ստանար նոր որակ, մեր ճշմարիտ եութիւնը ցոլացնող՝ թութակաբար կրկնուող երեւոյթներէն ձերբազատ....

.....

Օտար, ամայի ճամբէքի վրայ կը հեւայ, կը տրորուի ՀԱՅ ՀՈԳԻՆ, աւերիչ օտար հողմերուն դէմ յանդիման, որոնք ամէն կողմէն կը փչեն սարսռագին, կը սպառնան խեղդամահ ընել զայն....Ի՛նչ առասպելային, հրաշագոր ոյժ կայ սակայն անոր հրեղէն միջուկին մէջ թաքնուած, որ ահա դար ու դարեր կը տոկայ դեռ անասան....Այդ ոյժին մէջ կայ կարծէք հիւլէ մը Հայկէն, Մասունցի Դաւիթէն, Զօրավար Անդրանիկէն, մեր ՈԳԻԻ մեծերէն...., որոնք կը հսկեն մշտաբար որ չխորտակի ան՝ ՀԱՅ ՀՈԳԻՆ, որ դեռեւս իր ԼՈՅՄԻ առաքելութիւնը ունի իրագործելու, մանաւանդ ներկայ աշխարհի մթամած, խաւարակալած ոլորաններուն վրայ.....

.....

ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ....ԳԱՆՁԵՐՈՒ ԳԱՆՁ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ...Ամէն օր զայն կը կարդամ, ամէն օր զայն կ'ըմբռնեմ հոգեմտաւոր անհուն վայելքով, կը խորզամ անոր մէն մի բառին, մէն մի նախադասութեան, դարձուածքին, ասոյթին խորութիւնը, գեղեցկութիւնը, համն ու հոտը...տակաւին դարերէն եկող պատմութեան շունչը կը զգամ անոր բառարմատներուն մէջ...., եւ սէրս կը բազմապատկուի անոր հանդէպ: Հարուստ է մեր լեզուն, ճկուն, բարեհունչ, ամէնէն նուրբ զգացումը թէ միտքը արտայայտելու աստակ ճշգրտութիւն ունի ան: Մինչեւ վերջին շունչս կ'ուզեմ զայն սերտել, զայն խորապրիլ, անով հարստանալ, անով հայանալ....Մեր լեզուն մեր ինքնութիւնն է, մեր ներքին ազատութիւնը...: Մեր լեզուն մեր ոգեղէն հայրենիքն է, մեր ներքին Հայաստանը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ապրիլ-Մայիս-Յունիս 2014